- 49 Երբ ինք գեղ կը խօսէր, ժաղսվութապետին առունէն  
 մէկը եկաւ ու ըստ անոր, Աղջիկդ մեռաւ, ու վար-
- 50 դապետը մի յոդնեցներ: Բայց Յիսուս երբ լոեց,  
 պատասխան տռուաւ անոր ու ըստ, Մի վախնար,
- 51 միսյն հաւատա, ու պիտի ապրի: Եւ երբ տռունը

- մասւ, ուրիշ մէ՛կը թող չսուսաւ որ մանէ, բայց  
 միսյն Պետրոսը ու Յակովոսը և Յովաննեսը ու աղ-  
 52 ջկան հայրը ու մայրը: Ամէնն ալ կու լոյին ու կ'ող-  
 բոյին անոր վրոյ, և ինք ըստ, Մի լոգ, անիկա մե-  
 53 աած չէ, հապս կը քնանայ: Եւ անոնք ծալը կ'ընէն  
 54 զանիկա, քանի զիստէին թէ մեռաւ: Ու ինք ամէնն  
 ալ գուրս հանելով բռնեց անոր ձեռքէն ու կանչեց:  
 55 բակլով Աղջիկ, եղիր: Եւ անոր հոգին դարձաւ, ու  
 իսկոյն ապք ելաւ: և Յիսուս հրաման ըրաւ որ ուտելիք  
 56 անն անոր: Ու անոր ճնողքը ապշտած մնացին: և ինք  
 անանց պատուիրեց որ եղած ըստն մնորդու չզբուցեն:

- \*1 Եւ իր տասուերկու \*աշակերտները մէկաեղ իրեն  
 կանչելով անոնց զօրութիւն ու իշխանութիւն տուաւ  
 2 բոլոր գեկերուն վրոյ և ափաները բժշկելու: Եւ զա-  
 նանք զրկեց որ Աստուծոյ թագաւորութիւնը քարո-  
 3 վեն ու հիւանդները բժշկին: Եւ ըստ անանց, ձամ-  
 բու համար ըստ չաննէր, ոչ գաւապան և ոչ պարկ,  
 ոչ հաց և ոչ ստակ, ոչ ալ կը կին հանդերձ ունե-  
 4 նափ: Եւ ո՛ր տուն որ մօննէք, հնան մնացէք ու անկէ  
 5 ելեք Ու աննափ որ ձեղ չեն ընդանիք, երբ ոյն քա-  
 դապեէն կ'ելլէք, ձեր ոտքերուն փոշին անպամը թօթ-  
 6 վեցէք՝ իրենց գէմ վկայութիւն ըլլալու: Համար: Եւ  
 աննափ ելան ու գեղէ գեղ կը պարտէին, և ամէն  
 աեղ աւետարանը կը քարոզէին ու բժշկութիւն  
 կ'ընէին:

- 7 Եւ Հերովդէս չըրրորդապետը անոր բալոր գործերը  
լսելով՝ ասրակուսանիքի մէջ էր, որովհետեւ ունանք  
ըստածէին թէ Յալշաննէս յարա թիւն առաւ մեռել-  
ներէն, և սմանք՝ թէ Եղիս յօյտնուեցաւ, և ուրիշ-  
ներն ալ՝ թէ Առաջուան մարդարէներէն մէկը յա-  
9 բութիւն առաւ, Եւ Հերովդէս ըստ, Յալշաննէոք  
ես գիխատեցի, հապա ասիկա ո՞վ պիտի ըլլաց, որուն  
վրայով այսպիսի բաներ կը լսեմ: ու կ'սւզէք որ տես-  
նէ զանիկա:
- 10 Եւ առողքեալները դարձան ու պատմեցին անոր  
ինչ որ ըլլին, և առաւ զաննք, տաւանձին անսպատ  
աեղ մը քաշուեցաւ քողաքի մը քով՝ որսւն անունը  
11 Բնեթայիրեա էր: Եւ ժողովուրդները երբ իմացոն՝  
անոր ետեւն գացին, ու զաննք ընդունելով՝ կը խօ-  
սէր անոնց Աստուծոյ թագաւորութեանը վրայով. և  
որոնք որ բժշկութեան կարօտ էին՝ կը բժշկէր:
- 12 Ու երբ օրը սկսաւ իրիկուան մօտենալ ասաւուեր-  
կուքը եկան ու ըսին անոր, Արձակէ ժողովուրդները,  
որպէս զի շշակայ գեղեցը ու առապակները երթան  
իշեանին ու կերակուր գտնեն, վասն զի համապատ
- 13 աեղ մըն ենի: Քսաւ անոնց, Դաւք ստուք ասոնց ու-  
տեղիք. աննոք ալ ըսին, Մենք հինգ նկանակէն ու  
երկու ձուկէն աւելի բան չունինք, եթէ չերթանք  
այդ բայրը ժողովուրդին համար կերակուր չգնենիք:
- 14 (Քանդի հինգ հազարի չափ այր մարդիկ կային): Ու  
ըստ իր աշակերտաներուն, Աստոնք գտա գտա, յիսուն
- 15 յիսուն, նասեցուցէք: Եւ այնպէս ըըին ու ամենն ալ  
նասեցուցին: Եւ պին հինգ նկանակը ու երկու ձուկը
- 16 աւենելով ու գէպ ի երկինք նայելով՝ օրչնեց զաննոնք  
ու կարեց, և կու ասր աշակերտաներուն, որպէս զի

- 17 Ժողովուրդին առջեւ դնեն: Եւ կերան ու կշատրւն  
ամէնն ալ ու աւելցած կտրուանքները տասաւերկու  
կողով վերցուցին:
- 18 Ու եղաւ որ երբ ինք առանձին աղօթք կ'ընէր, ա-  
շակերտաներն ալ իրէն հետ էին, և հարցոց աննաց՝  
լսելով, ժողովուրդները ինձի համար մ՞վ կ'ըսէն
- 19 թէ եմ: Անոնք ալ պատասխան տալով՝ ըսին, Ուսաւ՝  
Յալշաննէս մկրտիչը, և ուրիշներ՝ Եղիս, ուրիշներ  
ալ՝ թէ Աստաջուան մարդարէներէն մէկը յարսւթիւն
- 20 առեր է: Եւ ինք ըստ անոնց, Հապա գոււք ինձի  
համար մ՞վ կ'ըսէք թէ եմ: պատասխան տուաւ Պետ-
- 21 ըսո ու ըստ, Աստուծոյ Քրիստոսը: Եւ ինք սասափկ  
պատուիրեց անոնց որ այս բանը մարդո՞ւ չըրացեն:
- 22 Ու ըստ թէ Պէտք է որ Որդին մարդոց շատ չարչա-  
րանքներ կրէ, և ծերերէն ու քահանայափեաներէն  
և դպիրներէն մերժուի ու սպաննուի, ու երրորդ օրը
- 23 յարութիւն առնէ: Եւ ամենուն կ'ըսէր, Եթէ մէկը  
կ'ուզէք իմ ետեկս գալ թաղ իր անձը ուրանաց, և
- 24 ամէն օր իր խաչը վերցնէ, ու իմ ետեկս գայ: Վասն  
զի ալ որ կ'ուզէք իր անձը ապրեցնել պիտի կորսնցնէ  
զանիկա. և ով որ ինձի համար իր անձը կորսնցնէ,
- 25 պիտի ապրեցնէ զանիկա Քանդի ինչ կը շահի մարդ  
մը՝ եթէ բայրը աշխարհը վաստիկի, և իր անձը կոր-  
սնցնէ կամ վաստ ընէ: Վասն զի ալ որ զիս և իմ
- խօսեան բան ու ամօթ սեպէ, Որդին մարդոց ալ  
զանիկա բան սեպէ ամօթ պիտի սեպէ՝ երբ գոյ իր
- 27 ու Հօրը և առոք հրեշտակներուն փառքովը: Բայց  
Ճշմարիտ կ'ըսէմ ձեզի, որ Հս կայնողներէն մէկ  
քանիները կան որոնք մահուան համը պիտի չառնեն,  
մինչեւ տեսնեն Աստուծոյ թագաւորութիւնը:

- 28 Ու եղաւ որ այս խօսքերէն գլեթէ ուժ՝ որ ետքը՝  
Պետրոսը ու Յովհաննէնէը և Յակովոսը առնելով, լեռը  
29 եղաւ աղօթք ընկելու Ու երբ ինք աղօթք կ'ընէր, եր  
երեսին տեսքը ուրիշ կերպ մը եղաւ, ու իր հագուստը  
30 ձերմակ ու փայլուն եղաւ, Եւ աչա երկու մարդիկ  
իրեն հետ կը խօսէին, որնկը Մովսէս ու Եղիա էին,  
31 Փառքով երեւցած, և անոր այս իւնաշն ելլելուն  
վրայով կը խօսէին, որ Երաւաղէմի մէջ պիտի կա-  
32 տարսէր, Բայց Պետրոս և անոր հետ եղողները քու-  
նավ ծանրացած էին, ու երբ արթնցան, տեսան անոր  
փառքը և այս երկու մարդիկը որոնք անոր քով կե-  
33 յեր էին: Ու եղաւ որ երբ անոնք զատուեցան անոր  
քովէն, Պետրոս ըստ Յիսուսի. Վարդապետ, աղէկ  
է որ հոս կենանք, ու երեք խրենիթ շննանք. մէկը  
քեզի և մէկը Մովսէսի ու մէկը Եղիայի, վասն զի  
34 չէր գիտեր ի՞նչ կը խօսէր, Եւ քանի որ անիկա այս  
բաները կը խօսէր, ամպ մը եղաւ ու անոնց վրայ հո-  
վանի եղաւ, և ամպին տակ մտած ատեննին վախ-  
35 ցան: Ու ձայն մը եղաւ ամպէն ըսելով Ատիկա է  
36 իմ սիրելի Որդիս, ատոր մասիկ ըրէք: Եւ երբ այն  
ձայնը եղաւ, Յիսուս մինակ գտնուեցաւ: Ու իրենք  
լուս կեցան, և իրենց տեսածներէն այն օրերը մար-  
դու բան մը չպատմեցին:
- 37 Ու եղաւ որ հետեւու օրը, երբ անոնք լեռնէն վար  
38 իջան, շատ ժողովուրդ անոր դէմը եղաւ, Եւ աչա  
ժողովուրդին մէջէն մարդ մը աղաղակեց ու ըստ,  
Վարդապետ, կ'աղաղէմ քեզի, նայէ իմ սրդիխ,  
39 քանիք իմ մէկ հատիկու է. Եւ աչա ոդի մը կը բռնէ-  
զանիկա, ան ալ յանկարծ կը կանչուըւուեէ, և զա-  
նիկա ցնցելով կը փրփրեցնէ, ու հաղիւ կը զատուե

- 40 անկէ՛ ջարդուբարդ ընկելալ զանիկա. Եւ քու աշա-  
կերտներուդ աղաչեցի որ հանեն զանիկա, ու չկրցան:  
41 Պատասխան տուաւ Յիսուս ու ըստ, Ով անհաւատ  
և խոտորեալ ազգ, մինչեւ ե՞րբ ձեզի հետ պիտի ըլ-  
42 լամ ու ձեզի համեմերեմ. Հսո բեր քու սրդիդ: Ու-  
երբ գեռ կը մօտենար, գեռ զանիկա գետինը զար-  
43 կու ու սասափկ ցնցեց: Խակ Յիսուս սասաւեց պիզծ  
պիին, և բժշկեց աղան ու զանիկա իր հօրը տուաւ:  
44 Եւ ամէնը կը զարմանային Աստուծոյ մեծամեծ գոր-  
ծերուն վրայ:
- Ու քանի որ ամէնը կը զարմանային Յիսուսի ըրած  
բաղր գործ երուն վրայ, անիկա ըստ, իր աշակերտ-  
ներուն, Դուք այս խօսքը բականչչներնիդ գրէք, վասն  
զի Որդին մարդոյ պիտի մատնուի մարդոց ձեռքը:  
45 Բայց անոնք չէին իմանար այն խօսքը, և անոնցմէ  
ծածկուած էր որպէս զի չհասկնան, ու կը վախնային  
այն խօսքին համար իրեն հարցնելու:
- 46 Խորհուրդ մըն ալ մտաւ անոնց մէջ. թէ արդեգք  
47 իրենց մէջ ո՞վ է մեծ: Խակ Յիսուս անոնց սրան  
խորհուրդը իմանալով տղայ մը առաւ ու զանիկա  
48 իր քով կայնեցուց, Եւ ըստ անոնց, Ով որ այս  
տղան իմ անունով կ'ընդունի զիս կ'ընդունի. և ան  
որ զիս կ'ընդունի՝ անիկա զիս զրկողը կ'ընդունի՝  
վասն զի ան որ ձեր ամէնուն մէջ պղպիկ է, անիկա  
մեծ պիտի ըլլայ:
- 49 Պատասխան տուաւ Յովհաննէս ու ըստ, Վար-  
դապետ, մէկը տեսանք որ քու անունով գեւեր կը  
հաներ և զանիկա արդիւցինք, վասն զի մեզի հետ

- 50 Հպարտիրու Եւ Յիսուս ըստաւ անոր, Մի արգիլէք,  
քանզի ան որ \*մեղի հակառակ չէ, մեր՝ կողմէն է:  
51 Ու եղաւ որ երբ իր ունցիներ վերանալու օրերը  
կը կատարուեին, ինք ալ +հաստատ որոշեց Երու-  
52 սաղմար երթալ Եւ իր երեսին առջևէն պատգա-  
մաւորներ զրկեց. և երբ գացին, Ստամբացւոց մէկ  
գեղը մտան որպէս զի իրեն համար պատրաստութիւն  
53 մը ընեն, Եւ չընդունեցին զանիկա, վասն զի անոր  
երեսը դէպ ի Երուսաղմար երթալու վրաւուն էր:  
54 Երբ իր աշոկերանները, Յակովսու ու Յավհաննէս, տե-  
սան, բայն, Տէր, կ'ուղի՞ն որ ըսենք, ու երկնիքէն  
կրակ իջնէ և սատկեցնէ զանոնք, ինչպէս Եղիսա ալ  
ըրաւ: Եւ դարձաւ յանդիմոննեց զանոնք՝ ըսելով  
56 Զէք զիսեր թէ ի՞նչ հոգիի ուեւ էք դուք. +Վասն զի  
Որդին մարդոց չէկաւ մարդոց հոգիները կորսնցնե-  
լու, հապա փրկելու:” և ուրիշ գեղ մը գոտին:  
57 Ու երբ ամնոք ճամբան կ'երթացին, մէկը ըստաւ  
58 անոր, Տէր, քու ետեւէդ գամ՝ ուր որ երթաս: Եւ  
Յիսուս. ըստաւ անոր, Աղուէնները որջեր ունին, ու եր-  
կինքի թաշունները՝ բայներ, ըսցը Որդին մարդոց  
ուշւէ չունի, ուր էր գլուխը դնէ:  
59 Ուրիշ մըն ալ ըստաւ, Եկուր իմ ետեւէս. ան ալ  
ըստաւ, Տէր, ինծի հրաման տուր որ առաջ երթամ  
60 իմ հայրա թաղեմ: Յիսուս ըստաւ անոր, Թաող տուր  
մեռեններուն որ թաղեն իրենց մեռենները, ըսցը դուն  
դնա Աստուծոյ թագաւորութիւնը քարոզէ:

\*Ուշաւ, ձեզի հակառակ չէ, ձեր  
†Յաւ, երեսը հաստատեց  
‡Ուշաւ չանչն

- 61 Ուրիշ մըն ալ ըստաւ, Տէր, ես քու ետեւէդ պիտի զամ:  
բայց ինծի հրաման տուր որ առաջ իմ առն մէջ եղողը-  
62 ներուն հրամական ողջին տամ: Յիսուս ըստաւ անոր,  
Ոչ մէկը որ ձեռքը մուճին փրայ կը դնէ ու երին կը  
նայի, Աստուծոյ թագաւորութիւնը յարմար է:

- 1 Առաջ բաներէն ետեւ Տէրը ուրիշ եօթանստուն ալ  
որոշեց, և զանոնք իր առաջեւէն երկու երկու զիկեց  
բոլոր քաղաքները ու տեղերը՝ ուր ինք պիտի երթար:  
2 Եւ կ'ըսէր անոնց, Հունձքը շատ է, ու մշակները  
քիչ: Ասամի հունձքին Տէրովը տղաչեցէք որ մշակներ  
3 հանէ իր հունձքին: Գացեք. ահա ես ձեզ կը զիկեմ  
4 իրեւ գառներ գայլերու մէջ: Ձեզի հետ քասկ մի  
առանէք, ոչ ալ պարկ, և ոչ կօշիկներ, ու ճամբան  
5 մարդու բարեւ մի տաք: Եւ ո՛ր տաւն որ մտնէք՝ ա-  
6 ռաջ բայք, \*Բարեւ այս տանը: Ու եթէ հն դարեւի  
արժանաւող մարդ՝ կայ, ձեր բարեւ պիտի հանգչի  
7 անոր վրայ, տպա թէ ո՛չ ձեզի պիտի դառնայ, իւ  
այն տանը մէջ մասցէք, ու անոնցմէ կերեք ու խմե-  
ցէք, վասն զի մշակը իր վարձքին արժանի է. տունէ  
8 տուն մի փոխութիւն Եւ ո՛ր քաղաք որ մտնէք ու ձեզ  
9 ընդունին, ինչ որ ձեր առաջ գրուի՛ կերեք. Ու  
բժշկեցէք անոր մէջի հիւտնդները, և ըսէք անոնց,  
10 Աստուծոյ թագաւորութիւնը ձեզի մօտեցեր է: Բայց  
ո՛ր քաղաք որ մտնէք ու ձեզ չընդունին, անոր հրա-

\*Յաւ, Խաղաղութիւն

+Յաւ, Խաղաղութեան որդի

- 11 պարակները ելլելով լսէք, Այն փոշին ալ որ ձեր քաղաքին մեր որդիքուան փակած է, ձեզի կը թօթվենք, միայն թէ զայս զիտնաք որ Աստուծոյ թագեւոր թիւնը ձեզի մօտեցեր է: Ձեզի կ'ըսեմ որ ոյն օրը Աստումի բարուարան աւելի գիւրին պիտի ըլ-
- 12 գաւորութիւնը ձեզի մօտեցեր է: Ձեզի կ'ըսեմ որ ոյն օրը Աստումի բարուարան աւելի գիւրին պիտի ըլ-
- 13 լոյց քան թէ ոյն քաղաքին Վայց քեզ Քորապին, վոյց քեզ Բնթայլիքա, վասն զի եթէ Տիւրսոփ ու Ախունի մէջ եղած ըլլային այն հրաշքները որոնք ձեր մէջ եղան, շատոնցմէ քարձով ու մոփիր մէջ
- 14 նատելով ապաշխարտած պիտի ըլլային Բայց գատառատոնին օրը Տիւրսոփ ու Ախունի աւելի գիւրին պիտի
- 15 ըլլայց քան թէ ձեզի: Եւ գուն, Կափառնայում, որ մինչեւ երկինք բարձրացած են, մինչեւ գժոխք պիտի
- 16 իջնես: Ան որ ձեզի մատիկ կ'ընէ, ինձի մատիկ կ'ընէ. և ան որ ձեզ կը մերժէ, զիս կը մերժէ. և ան որ զիս կը մերժէ, զիս զրկովը կը մերժէ:
- 17 Եւ եօթանասուն աշխերանէց գարձան ուրախութեամբ ու ըսին, Տէր, քու, անունովդ գեկերն ալ
- 18 մեզի կը հնազնութին: Եւ ըստ անսնց, Սատանան
- 19 փայտալի պէս երկինքն վայ ինկած կը ախոնէի: Աչա ձեզի իշխանութիւն կու տամ օձերու ու կարիճներու և թշնամիին լուսը զօրութեանը վրայ կափկուաե-
- 20 լու, ու լնուա բան մը ձեզի պիտի չփասէ: Բայց գուք անօր վրայ մի ուրախանաք որ ւո՞ս ոգիները ձեզի կը հնազանդին, հապա ուրախացէք որ ձեր անունները երկինքը դրուած են:
- 21 Այն նոյն ժաման Յիսուս Հոգիով ուրախացաւ ու ըստ, հնորհակալ եմ քեզմէ, ով Հայր, Տէր երկինք ե երկին, որ ոյս բաները ծածուկ պահեցիր իմաստուններէն և դիտուններէն, ու աղջ յայտնեցիր.

- այս, ով Հայր, վասն զի քու առջեղ այսպէս հաճելի 22 եղաւ, Ամէն բան ինձի արուեցաւ իմ Հօրմէս, ու մէ՛կը չգիտեր թէ ո՛վ է Որդին, բայց միայն Հայրը: և թէ ո՛վ է Հայրը, բայց միայն Որդին, և ան՝ որու Որդին կ'ուղէ յայտնել:
- 23 Եւ աշակերտներուն գաւանալով՝ առանձին ըստ, Երանի այն աչքերուն՝ որոնք ձեր տեսածները կը 24 տեսնեն. Քանովի կ'ըսեմ ձեզի, որ շատ մարդարկէներ և թագաւորները ուղեցին ձեր տեսածները տեսնել ու չտեսն, և ձեր լսածները լսել ու չլսեցին:
- 25 Եւ ահա օրինական մը ելտւ, ու զանիկա փորձելով ըստ, Վարդապետ, ի՞նչ ինեմ որ յաւիտինա-
- 26 կան կեանքը ժառանգեմ: Անիկա ալ ըստ, անօր, Օրէնքին մէջ ի՞նչ գրուած է, ի՞նչպէս կը Կարդաս:
- 27 Պատասխան տուաւ անիկա ու ըստ, Քու Տէր Աստուածդ սիրես քու լուսը սրտեդ ու քու բոլոր անձէդ և քու բոլոր զօրութենէդ ու քու բոլոր միտքեդ, և
- 28 քու ընկերդ քու անձիդ պէս Եւ ինք ըստ անօր, Շիտակ պատասխան տուիր. ատիկա ըրէ ու պիտի
- 29 ապրիս: Խոկ անիկա ուղելով ինքինք արդարացնել:
- 30 ըստ Յիսուսի, Բայց իմ լնիկերո ո՞վ է: Պատասխան տուաւ Յիսուս ու ըստ, Մարդ մը Երանազգէմ: Երիքով կ'իջնէր, ու աւազակներու չերտ ինիկա, որոնք մերկացուցին զանիկա ու վիրաւորելով կիսամեռ:
- 31 Թօղուցին ու գացին: Եւ պատուհեցաւ որ քահանայի մը ոյն Ճամբայէն կ'իջնէր, ու զանիկա տեսնելով
- 32 անդիի կողմէն անցաւ: Նոյնպէս Գլւատացի մըն ալ ոյն տեղ հասնելով գնաց ու տեսաւ, և անդիի կողմէն անցաւ, Բայց Աստուրացի մը որ Ճամբարդութիւն կ'ընէր, եկաւ անօր քով ու զանիկա տեսնելով
- 33 մէն անցաւ, Բայց Աստուրացի մը որ Ճամբարդութիւն

- 34 Խղճաց. Եւ մծակեցաւ, անոր վերպերը փաթթեց,  
վրան ձեթ և զինի թշափելով, ու իր գրասախն վրայ  
դնելով՝ տարաւ զանիկա պանդոկ մը, և անոր հոգ  
35 տարաւ: Եւ հետեւելու օրը երբ կ'ելլէր անկէ, երկու  
դահէկան հանեց՝ պանդոկապեամն տաւաւ և անոր  
ըստւ, Հոգ տար տասոր, ու ինչ որ աւելի ծափք ընես,  
36 ես գտանալուս ես քեզի կը վճարեմ: Հիմա այն երե-  
քէն ո՞րը քեզի կ'երենայ ընկեր ըլլալ տապակներաւն  
37 Ներէ կինոպին: Եւ անիկա ըստւ, Ան որ ողսրմու-  
թիւն ըրաւ: Այն տաեն Յիսուս ըստւ անոր, Գնա,  
դուն ալ ոյնափէս ըրէ:
- 38 Ու եղաւ որ երբ անոնք կ'եթային, ինք գեղ մը  
մասու, և կին մը, Մարթա անունավ, զանիկա իր  
39 անունը ընդունեց: Եւ անիկա քայր մը անկէ, որուն  
անունը Մարիամ էր, որ էւս՝ Յիսուսի ոսքերաւն  
40 քավ նասու, ու անոր խօսքերը մասիկ կ'ընէր: Բայց  
Մարթա շատ սպասաւորութիւնով զբաղած էր, ե-  
կաւ առաջ քավ ու ըստւ, Տէր, քայ հոգդ չէ<sup>o</sup>, որ իմ  
քայրս զիս մինակ թողաւց սպասաւորութեան մէջ  
41 ուստի տասոր զբուցէ որ ինձի օգնէ: Պատասխան  
տաւաւ Յիսուս ու ըստւ անոր, Մարթա, Մարթա,  
դուն շատ բաներու համար հոգ ընելով կը տագնա-  
պիս: Բայց մէկ բան պէտք է, և Մարիամ այն աղէկ  
բաժինը ընտրեց, որ իրմէ պիտի չառնուի:
- 42 Գլ. ԺԱ.

- 1 Ու եղաւ որ աեղ մը աղօթք կ'ընէր: Եւ երբ դադա-  
րեցաւ, իր աշակերտաներէն մէկը ըստւ իրեն, Տէր, մեղի  
աղօթք ընել սորմեցուր, ինչպէս Յովհաննէս ալ իր  
2 աշակերտաներաւն սորմեցուր: Եւ ըստւ աննաց, երբ ա-

- զօթք կ'ընէր՝ ըսէր, Ով Հայր՝ որ երկինքն ես՝, քու  
անունդ ուուրը ըլլայ: քու թագաւորութիւնդ գոյ.  
\*քու կամքք ըլլայ, ինչպէս երկինքը՝ նոյնապէս երկրի  
3 վրայ: Մեր ամէն օրուան հացը օրէ օր մեղի տուր.  
4 Եւ մեղի ներէ մէր մեղքերը, քանզի մենք ալ կը նե-  
րներ ոյն ամէնուն՝ որ մեղի պարագական են, ու մեզ  
փորձութեան մի տանիք, \*հապա չարէն մեզ ապատէ:  
5 Եւ ըստւ աննաց, Զեղմէ ո՞վ է առ բարեկամ մը  
ունենայ, ու կէպիշերուան մէջ երթայ անոր և ըսէ  
անոր, Բարեկամ, ինձի երեք նկանակ փոփ տուր.  
6 Վասն զի իմ մէկ բարեկամն ճամբայէ ինձի եկաւ,  
7 ու բան մը չունիմ անոր առջեւ դնելու: Անիկա ալ  
ներսէն պատասխան ապա և ըսէ, Զի մի յոդնեցներ,  
արդէն դուռը դոցուած է, ու աղաքս իմ քովս ան-  
կոյինի մէջ են: չեմ կրնար ելլէլ ու քեզի հաց տար:  
8 Զեղի կ'ըսէմ, Թէե բարեկամն թեան համար չելլէ  
տայ անոր, սակայն անոր թափանձոնիքն համար պի-  
9 ափ ելլէ, ու պէտք եղածը ապա անոր: Ես ալ կ'ըսէր  
ձեզի, Խնդրեցէք և պիտի արուի ձեզի, փնտուցէք  
ու պիտի գանէք, բայց զարկէք և պիտի բացափ  
10 ձեզի: Վասն զի ամէն ալ որ կը խնդրէ՝ կ'առնէ, և  
ով որ կը փնտուէ՝ կը գանէ, և ալ որ բայց կը զար-  
11 նէ պիտի բացուի անոր: Զեղմէ ո՞վ է ոյն հոյրը,  
որմէ իր որդին հաց որ ուզէ, միթէ քա՞զ պիտի տայ  
անոր կամ եթէ ձուկ սուզէ, միթէ ձուկին տեղ օձ  
12 պիտի տայ անոր: Եւ կամեթէ հաւեկիթ ուզէ, միթէ  
13 կարի՞ճ պիտի տայ անոր: Ուստի եթէ գուք որ չոր  
եք՝ ձեր զաւակներաւն աղէկ ընծաններ տալ գիտէք,

\*Ուսան շառնին

- սրչոսի աւելի ներ Հայրը երկինքէն Սուրբ Հոգին  
պիտի առյ անոնց որ իրմէ կը խնդրեն:
- 14 Ու գե մը կը հանէր, և անիկա համրէր, ու եղաւ  
որ երբ գեր եղաւ, համրէ խօսեցաւ, և ժողովուրդ-  
15 ները զարմացան: Բայց անոնցմէ մէկ քանիները լսին,  
Ապիկա գեերուն թէեղղեւաւլ իշխանին միջացով  
16 զեերը կը հանէ: Ուրիշներն ալ փորձելով երկինքէն  
17 նշան մը կ'ուղղէն անկէ: Բայց ինք դիմանալով անոնց  
խորհուրդները՝ ըստ աննաց, Ամէն թագաւորութիւն  
իրեն գէմ բաժնուած՝ կ'աւերի, և տուն մը՝ \*իրեն  
18 գէմ բաժնուած՝ կը կործանի. Հապա եթէ Աստանայ  
իրեն գէմ բաժնուած է, անոր թագաւորութիւնը  
ի՞նչպէս պիտի կենաց. որպէշետե կ'ըսէք թէ թէեղ-  
19 զերուղով գեերը կը հանեմ: Խակ եթէ ես թէեղղե-  
բուզավ գեերը կը հանեմ: Ճեր որդիները ինչով կը  
հանեն. ուրեմն անոնք պիտի ըլլան ճեր դաստաւոր-  
20 ները Բայց եթէ ես Աստանածոյ մատավը կը հանեմ  
գեերը, ուրեմն Աստանածոյ թագաւորութիւնը ճեր  
21 վրայ հասած է: Երբ զօրաւոր ժամը մը զէնքերը վրան  
առած՝ իր դաշն բակը կը պահպանէ, անոր բաները  
22 իսպաղութեան մէջ կը մնան. Բայց երբ անկէ աւելի  
զօրաւորը վրան գալով յաղթէ զանիկա, անոր զէն-  
քերը կ'առնէ: Որոնց ինք յուսուցեր եր, և անկէ ա-  
23 ռած՝ կողապուտը կը բաժնէ: Ան որ ինձի հետ չէ  
ինձի հակառակ է, և ան որ ինձի հետ չժողովեր՝  
ցիրուցան կ'ընէ:
- 24 Երբ պիղծ ողին մարդէ մը կ'ելլէ, անջուր տեղեր  
կը պարափ, հանգաստութիւն կը փնտուէ, ու երբ

- չդաներ՝ կ'ըսէ, Դառնամ նորէն իմ՝ տաւն՝ ուրկէ  
25 ելայ: Եւ կու գայ, զանին մաքրուած ու յարդար-  
26 ուած կը գտնէ: Այն տան կ'երթայ, և էւն ձեռ  
կ'առնէ եօթը ուրբէլ ոգիներ իրմէ աւելի շար, ու  
մտնելով հոն կը լնակին, և այն մարդուն վերջը ա-  
ռաջինէն գէշ կ'ըլլայ:
- 27 Ու եղաւ որ երբ անիկա ոյս բաները կը խոնէր,  
ժողովաւրդին մէջէն կին մը ձայնը վերցուց ու ըստ  
անար, Երանին այս որովայնին՝ որ քեզ կուց, և այն  
28 ծիծերուն՝ որոնք քեզի կաթ ստուին: Եւ ինք ըստ,  
Մանաւանդ. թէ Երանին աննաց որ Աստուծոյ խոռքը  
կը լսին ու կը պահէն:
- 29 Ու երբ ժողովաւրդները անոր կը գիշուեին,  
սկսաւ ըսելլ Այս ազգը չար է, նշան կ'ուղիէ, և առէն  
նշան պիտի չտրուի անոր, բայց միայն Յովսան մար-  
30 գարէին նշանը: Քանզի ինչպէս Յովսան Նինուեցի-  
ներուն նշան եղաւ, այնպէս Որդին մարդոյ պյս աղ-  
31 գին պիտի ըլլայ: Հարաւէ թագուհին դատաստանին  
ու այս ազգին մարդոցը գէմ պիտի ելլէ, ու պիտի  
դատապարտէ ասոնք, վասն զի երկիր ծայրերէն եկաւ.  
Սողոմնի իմաստութիւնը լսելու, և ահա Սողոմնէ:  
32 մէջ մէկը կայ հոս: Նինուեի մարդիկը դատաստանին  
ու այս ազգին գէմ պիտի ելլէն, ու պիտի դատա-  
պարտէն ասիկէտ, վասն զի Յովսանի քարոզութիւնով  
զեղջի եկան, և ահա Յովսանէ մէջ մէկը կայ հոս:  
33 Մէկը ճրագը չվառեր, ծածուկ տեղ մը գներ, ոչ  
ալ գրաւանի տակ, Հապա աշխանակի վրայ, որպէս  
34 զի ներս մտնողները լցուը տեսնէն: Մարմինին ճրագը  
աչքն է, ուստի երբ աչքի պարզ է, բոլոր մարմինդ  
ալ լուսաւոր կ'ըլլայ. բայց երբ աչք վաս է, մար-

- 35 մինդ ալ մութ՝ կ'ըլլայ, Ուրեմն զգսչ կեցիր, որ քու  
36 մէջդ եղած լցուր խոսաւոր չպայս: Որդ եթէ քու բու-  
լը մարմինդ լուսաւոր է, և մութ՝ մաս մը չունի,  
բոլորն ալ լուսաւոր կ'ըլլայ, ինչպէս երր ճրագ մը  
իր փայլաւուութիւնով քեզ կը լուսաւորէ:
- 37 Ու երբ այս բաները կը խօսէր, փարիսեցի մը կ'ա-  
ղամչէր անոր՝ որ իր քով ճաշ ուտէ, անիկա ալ  
38 մասաւ սեղան նասաւ: Խակ փարիսեցին երր անսաւ,  
39 զարմանցաւ, որ նախ զուացուեցաւ ճաշէն առաջ Եւ  
Տէրը ըստաւ անոր, Հիմն դուք, փարիսեցիներ, գուա-  
թին ու պնակին գուրսիդին կը մաքրէր, ու ձեր ներսի-  
դին յափշտակութեամբ և չարութեամբ լեցուն է:  
40 Անիկելքներ, ան որ դուրսինը ըստաւ, ներսին ալ ինք  
41 չըրաւ: Սակայն անհայ մէջ եղածներէն ողորմութիւն  
տուէր, և ահա ամէն բան մաքուր կ'ըլլայ ձեզի:  
42 Բայց վայ ձեզի փարիսեցիներուդ, որ անանախին ու  
փետենային և բոլոր խոսելըններուն տասանորդը կը  
վճարէր, ու զանց կ'ընէր իրաւունքը և Աստուծոյ  
43 մէրը, ասոնկը պէտք էր ընել և զանոնք չձգել Վայ  
ձեզի փարիսեցիներուդ, որ ժողովարաններուն մէջ  
տուածին աթոռները կը սիրէր, ու շուկաներուն մէջ  
44 բարեները: Վայ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փա-  
րիսեցիներ, որ անյայտ գերեզմաններու նման էք,  
որոնց վրայէն մորդիկ կը քային ու չեն գիտերի  
45 Եւ օրինականներէն մէկը պատասխան տալով ըստ  
անոր, Վարդապետ, ոյդ խօսերը զրուցելով մեզ  
46 ալ վար կը զարնեաւ Եւ անիկա ըստաւ, Զեղի ալ վայ  
օրինականներուդ, որ տանելու դժուար բեռներ կը  
բեռցնէր մարդոց, ու դուք ձեր մէկ մատով այն  
47 բեռներուն չէք դպիր: Վայ ձեզի, որ մարդարէնե-

- րուն գերեզմանները կը շինէք, ու ձեր հայրերը սպան-  
48 նեցին զանոնք: Ուրեմն կը վկայէք և հաւանաթիւն  
կու տաք ձեւ հայրերան ըրածներուն, վասն զի իրենք  
սպաննեցին զանոնք, ու դուք անոնց գերեզմանները  
49 կը շինէք: Անոր համար ալ Աստուծոյ իմաստու-  
թիւնը ըստաւ, Պիտի զվեմ անոնց մարդարէներ ու  
տուոքեալներ, և անոնցմէ ո՛րը պիտի սպաննեն ու  
50 ո՛րը հալած են. Որպէս զի աշխարհի սկզբէն հետէ  
թափուած բոլոր մարդուրէներուն արիւնը այս աղ-  
51 քէն պահանջուի, Աբէլի արիւնէն մինչև Զաքա-  
րիայի արիւնը, որ սեղունին ու տաճարին մէջտեղ  
կրոսուեցաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Այս ազգին  
52 պիտի պահանջուի: Վայ ձեզի օրինականներուդ, որ  
գիտութեան ըստալին վերցուցիք, դուք չմտաք, և  
մոնողներն ալ արգիւեցիք:
- 53 Ու երբ ոյս բաները անոնց կը զրուցէր, դպիրները  
ու փարիսեցիները սկսան խիստ դժուարիլ, և շատ  
54 ըստերու վրայով անոր բերնէն խօս վիտուել, Եւ  
անոր դարան պատրաստելով կը վիտուէին թէ ինչ-  
պէս անոր բերնէն բան մը սրսան, որպէս զի անոր  
վրայով ամբատանութիւն ընեն:

- 1 Այս միջոցին երր բերուառ ժողովուրդներ վրան  
ժողովուեցան, մինչև մէկզմէկ կը կոփէին, սկսաւ ըսել  
իր աշակերտներուն, Ամէնէն առաջ ինքիլիքնիդ  
դպիչ պահէցէր փարիսեցիներուն խմորէն, որ է կեղ-  
2 ծաւորութիւն. Վայ ոչ բան մը չկոյ ծածուկ՝ որ  
պիտի չյայտնաի, և գաղտուկ՝ որ պիտի չգիտուէ,

- 3 Ուստի ինչ որ մութ տեղը զրուցեցիք, անիկա լցո  
տեղը պիտի լսուի, և ոյն զրո ներքին սենեավիներուն  
մէջ ականջի խօսեցաք, ասանիքներուն վրայ պիտի  
4 քարոզուի: Բայց ձեզի իմ բարեկամներուս կը զրու-  
ցեմ: Մի վախնաք աննեցմէ՝ որ մարմինը կը սպառ-  
նեն, ու անկէ ետև աւելի բան մը ընկլու քառական-իւն:  
5 չունին: Հասպա ձեզի ցուցինմէ թէ որմէ՛ պիտի վախ-  
նաք. Անկէ վախցէք՝ որ սպաննելէն ետև իշխանու-  
թիւն աւնի գեհետու ձգելու. այս, կ'ըսեմ՝ ձեզի,  
6 Անկէ վախցէք: Զէ՞ որ հինգ Ճնճղուկ երկու գանկի  
կը ծախուի, և անոնցմէ մէ՛կը մոռցուած չէ Աստու-  
7 ծոյ առջեւ: Բայց ձեզ գլխուն ըսլըր մազերն ալ համ-  
րուած են, ուրեմն մի վախնաք, Համ՞ ո՞ դոք շատ  
8 Ճնճղուկներէն աւելի աղէկ էք: Եւ ձեզի կ'ըսեմ,  
Ամէն ով որ զիս կը գաւանի մարդոց առջեւ, Որդին  
մարդոց ալ զանիկա պիտի գաւանի Աստուծոյ հրեշ-  
9 տակներուն առջեւ: Բայց ան որ զիս մարդոց առջեւ  
կ'ուրանապ, ուրացուած պիտի ըլլայ Աստուծոյ հրեշ-  
10 տակներուն առջեւ: Եւ ամէն ով որ Որդուոյ մարդոց  
դէմ բան կ'ըսէ, պիտի ներուի անոր, բայց ան որ  
Սուրբ Հոգին գէմ հայհպութիւն կ'ընէ, պիտի  
11 Ծներուի անար: Ու երբ ձեզ ժողովարանները և իշ-  
խանութիւններու ու պետութիւններու առջեւ ասո-  
նելու ըլլան, հոգ մի ընէք թէ ինչպէս կամ ինչ  
պատոսախան պիտի առաք, կամ ինչ պիտի ըսէք:  
12 Վասն զի Ասուը Հոգին պիտի սորվեցնէ ձեզի նպյու  
ժամունն ինչ որ պէտք է խօսիլ:  
13 Ժողովուրդին մէջն մէկը ըստ անոր, Վարդապետ,  
զրուցէ եղածոր, որ Քով Խնած ժառանգութիւնը ինձի  
14 Տես բաժնէ: Ան ալ ըստ անոր, Մարդ, ո՞վ զիս

- 15 ձեր վրայ գատաւոր կոմը բաժեն ընող դրաւ: Եւ  
ըստ անոնց, Նայեցէք և զգուշացէք ադամհութենէ.  
վասն զի մարդուս ստացուածքներուն աւելնալէն  
16 Համառած չէ իր կեանքը: Առակ մըն ալ խօսեաւ ա-  
նոնց ըսելով Հարուստ մարդու մը արտերը առաստ  
17 բերքեր առանին. Եւ ինք կը մասածէր ինքնիրեն ու  
կ'ըսէր, Խոչ ընեմ, վասն զի տեղ չունիմ, ուր իմ  
18 բերքերս ժաղվեմ Եւ ըստ, Զայց ընեմ: իմ ամբար-  
ներս քակեմ ու ա՛լ աւելի մեծ շնեմ, և հսն ժող-  
19 վեմ իմ ըլլոր բերքերս ու բարիքներս. Եւ իմ անձիս  
ըսեմ: Ով անձս, շաս բարիքներ սւնիս շատ ասրի-  
ներու համար ժողվուած. հանգչէ, կեր, խմէ և ու-  
20 բախ եղիք: Բայց Աստուծոյ ըստ անոր, Անմիտ, այս  
գիշէք հոգիք քեզմէ պիտի պահանջուի. աւստի այն  
21 քու պատրաստած բաներդ որո՞ւ պիտի ըլլան: Այս-  
պէս է անիկա որ իր անձին համար գանձ կը դիզէ,  
ու Աստուծոյ չչարստանար:
- 22 Եւ ըստ իր աշակերտաներուն, Ասոր համար կ'ըսեմ  
ձեզի, Հոգ մի ընէք ձեր կեանքին համար՝ թէ ինչ  
պիտի ուտեք, ոչ ալ մարմինին համար՝ թէ ինչ  
23 պիտի հագնիք. Վասն զի կեանքը կերակուրէն աւելի  
24 է, ու մարմինը հագուստէն: Նոյեցէք ագռաւնե-  
րուն, որոնք ոչ կը սերմանն և ոչ կը հնձն, որոնք  
ոչ շտեմարաններ ունին, ոչ ալ ամբարներ, ու Աստ-  
ուծ զաններ կը կերակու. դոք ո՞չչափ աւելի ըստ  
25 էք թուչուններէն Եւ ձեզմէ ո՞վ կրնայ իր հոգ ընե-  
26 լովէ իր հասակին վրայ կանգուն մը աւելցներ: Հապա  
կթէ ամենափաք բանին կարող չէք, որիք ըստներու  
27 համար ինչո՞ւ հոգ կ'ընէք: Նայեցէք շուշնչներուն,  
ինչպէս կ'ածին. ոչ կ'աշխատին և ոչ կը մանեն

բայց ձեզի կ'ըսեմ որ Սողոմնն ալ իր բոլոք փառտ-  
ւորութեանը մէջ անսնօմէ մէկո՛ւն պէս չչափուե-  
28 ցաւ: Ուստի եթէ խսով որ պարօք գաշտի մէջ է, ու  
վազը փուռը կը ձգուի, Աստուած ոյնպէս կը հագ-  
29 ուեցնէ, ո՞չչափ աւելի ձեզ թերահաւատաներ: Ալ  
դուք մի փնտաէք թէ լինչ պիտի ուտէք և լինչ  
30 պիտի խմեք, ու մի շփոթիք. Վասն զի այդ բալոր  
բաները աշխարհիսազգերը կը փնտան: ու ձեր Հայրը  
31 դիմէ որ այդ բաները ձեզի պէտք են: Բայց դուք  
Աստուածոյ թագաւորութիւնը ինդրեցէք, և այդ բո-  
32 լը բաներն ալ ձեզի պիտի արուեն: Մի վախնար,  
պղափկ հօտ, վասն զի ձեր Հայրը հաճեցաւ որ թա-  
33 գաւորութիւնը ձեզի ասց: Ծախսեցէք ձեր սասց-  
ուածքը և սղորմանթիւն առուեք: և ձեզի չիննալու  
քասկներ պատրաստեցէք, և երկինքը՝ չպակելու  
գանձ մը, ուր ոչ գողը կը մօտենայ և ոչ ցեցը կ'ա-  
34 պականէ: Իմանզի ձեր գանձը ուր որ է, սիրտերնիդ-  
35 ոյ հոն պիտի ըլլաց: Ձեր մէջքերը գոտեպուած ըլ-  
36 լան, ու ճարտները վառուած: Եւ դուք այն մարդոց  
նմանն որոնք իրենց աւերջը կը սպասեն, թէ ե՛ր պի-  
տի գասանցի հարմակեն, որպէս զի երը գայ և բառ-ը-  
37 զարնէ, խկղն բանան անոր: Երանի՛ այն ծառանե-  
րուն, որ տէրը երը գայ՝ զանոնք արթաւն պիտի գանէ: .  
Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ինք գաովն մէջքը պիտի  
կոտի ու սեղան նստեցնէ զանոնք, և առաջ անցնե-  
38 լով սպասաւորութիւն պիտի ընէ անոնց: Եւ եթէ  
Քէլքուած երկրորդ պահուն գայ, կամ երլորդ պա-  
հուն գայ ու պիտի գանէ, երանիլի են այն ծառաւ-  
39 ները: Բայց զայս զիացէք, որ եթէ առնաւուերը գիտ-  
նար թէ ո՞ր սատեն գողը կու գայ, արթուն կը կենար

40 ու թող չեր տար օր իր տունը ծակեն: Ուրեմն գուք  
ալ պատրաստ կեցէք, քանզի Որդին մարդոյ կու գայ  
ոյնպիսի ժաման: մը մէջ՝ որ գուք չեք կործեր:  
41 Եւ Պետրոս ըստ անոր, Տէր, այդ առակը մեղի  
42 կ'ըսես թէ ամենուն ալ: Եւ Տէրը ըստ, Ուրեմն ովլ-  
է պյն հաւատարիմ ու իմաստուն անանուզ, զոյ տէրը  
իր գերգաւատանին վրայ պիտի գնէ, որպէս զի սուե-  
կան նաև աւելի բը տայ: Երանի՛ է պյն ծառապին,  
43 նին առաջ աւելի բը տայ: Երանի՛ է պյն ծառապին,  
զոյ իր աւելը եկած ատենը պյնպէս ըրած պիտի գանէ:  
44 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ իր բոլոք ունեցածին վրայ  
45 պիտի կեցնէ զանիկա: Հապա եթէ պյն ծառան իր  
որպին մէջ ըստ, նմ տէրս իր գողը կ'ուշացնէ: և  
մկի ծառամները ու աղամիները ծեծել, և ուտել  
46 ու խմել ու գինովնալ: Այն ծառապին աւելը պիտի  
գայ աղոտիս օր մը որ չափաներ, և աղոտիս ժամ մը  
որ չփաներ, և զանիկա մէջտեղէն պիտի կարէ, ու  
անոր բաժինը անհաւատարիմներուն հետ պիտի գնէ:  
47 Եւ պյն ծառան որ իր աւելոջը կամքը զիտէ ու չպատ-  
րաստեիր, ոչ ալ անոր կամքը ի գործ կը գնէ, շատ  
48 ծեծ պիտի սուեւ: Բայց ան որ չգիտեր ու ծեծի ար-  
ժանի բան մը կ'ընէ, քիչ ծեծ պիտի սուեւ: որու որ  
շատ արտեցաւ, շատ պիտի սուզուի անկէ, և որու որ  
աւելի յանձնաւեցաւ, ա՛լ աւելի պիտի պահանջուի  
անկէ:

49 Ես կրակ ձգելու եկոյ երկրի վրայ, ու լինչ կ'ու-  
50 զեմ եթէ արդէն բորբոքած է: Բոյց մկրտութիւն մը  
ունիմ մկրտուելու, և լինչպէս կը տափնապիմ մին-  
51 չե կատարուի: Կը կարծէք թէ ես երկրի վրայ խա-  
զազութիւն տալու եկոյ. ձեզի կ'ըսեմ: Ոչ, հապա  
բաժանմունկը. Վասն զի ասկէ ետեւ մէկ տան մէջ

- Հինգը էւրմէ բաժնուած պիտի ըլլան, երեքը երկու-  
53 քեն ու երկուքը երեքէն. Հայրը պիտի բաժնուի որ-  
դիէն, և սորդին հօրմէն, մայրը աղջիկէն ու աղջիկը  
մօրմէն, կեսուրը իր հարսէն ու հարուր իր կեսուրէն,  
54 Եւ ըստ ժողվուրդներուն, երբ արեմուտքի կող-  
մէն ամպ մը ելած կը տեսնէք, շուտ մը կ'ըսէք թէ  
55 Անձրէ պիտի գայ, և այնպէս կ'ըլլայ: Ու երբ հա-  
րաւային հովը կը փէէ, կ'ըսէք թէ Տաք պիտի ըլլայ,  
56 և այնպէս կ'ըլլայ: Կեղծաւորներ, երկրի ու երկինքի  
երկոր քննելը գտեկը, հապա այս ժամանակը թնչողէս  
57 չէք քններ, Եւ ինչո՞ւ դուք ձեզմէ չէք որոշեր իրա-  
58 ւոնքը: Երբ դուն քու սոսիկիդ հետիշխանին երթա-  
լու ըլլա, ճամբան մէջ անկէ աղասաւելու համար  
ջանք ըրէ, որ չըլլայ թէ քեզ դատաւորին առջե  
քաշէ, ու դատաւորը դաշիճն ձեռքը տոյս քեզ ու  
59 դաշիճն ալ բանալ դնէ: Քեզի կ'ըսէմ, բնաւ պիտի  
չէլլես անկէ, մինչև վերջին լումոն չվճարես:

## ԳԼ. ԺԳ

- 1 Եւ ամնաք պին ատեն ներկայ դատուելով՝ պատմե-  
ցին անոր Գաղիելացւոց վրայավ որոնց արիւնը Պիղա-  
2 տոս իրենց զահերուն հետ խառնեց: Եւ Յիսուս պա-  
տասխան ատլով ըստ անոնց, կը կարծէք որ այն  
Գաղիելացիները բալոր Գաղիելացիներէն աւելի մե-  
3 զաւոր էին, որոնք այսպիսի բաներ քաշեցին: Զեզի  
կ'ըսէմ: Ոչ. հապա իթէ չապաշխարէք, ամէնդ ալ  
4 նոյնպէս պիտի կորսաւիք: Կոմը թէ պին ատանըլով  
հոգին որոնց վրայ Ակելլամի մէջի աշարակը ինկաւ,  
և զանաք մեռցուց. կը կարծէք որ անոնք Երուսա-

- ղէմի մէջ բնակած բաղրացմէ աւելի պարտա-  
5 ար էին: Զեզի կ'ըսէմ, Ոչ. հապա եթէ չապաշխա-  
րէք, ամէնդ ալ նոյնպէս պիտի կորսաւիք:  
6 Այս առանձին ալ ըստու. Մարդ մը իր ոյցիկին մէջ  
անկուած թղենի մը ուներ, ու եկաւ անկէ պառուղ  
7 կիսուելու և չգտաս: Ուստի ըստ այդ եղանինին փրայ  
երեք տարի է որ կու գամ ոյդ թղենինին փրայ  
պառուղ զնոտուելու, ու չեմ գտներ, աւտափկա կարէ,  
8 ինչո՞ւ համար գետինը խափանէ: Անիկա պատահան  
տուտ ու անոր ըստու, Տէր, ոյս տարի ալ տափկա  
թող առուր, մինչեւ ատոր բարբակը բըեմ ու թրիք  
9 գնեմ, Եւ եթէ պառուղ տոյց ավելի, ապա թէ ոչ գալ  
ուրէ կարեն տափկա:  
10 Եւ ինք ժողվարաններէն մէկուն մէջ շաբաթ օրը  
11 կը արվեցներ, Եւ աշա կին մը կար, որ հիւանդու-  
թեան ողի մը ուներ ատանըլով: տարիի ի վեր, ու  
կծկասած էր և ամեննեին չէր կննար շիտակ կայնիւ  
12 Ու Յիսուս զանիկա տեսնելով էին կանչեց և ըստ-  
անոր, Ով կին, գուն քու հիւանդութենէդ արձակ-  
13 առած ես: Ու ձեռքը տանը վրայ դրաւ, և կոկոյն շիտ-  
14 կուեցաւ ու փառք կու տար Աստածոյ: Խա ժողո-  
վարանին իշխանը պատմախան տուտ բարկանալով  
որ Յիսուս շաբաթ օրը բժշկեց, և ըստ ժողովուր-  
դին: Վեց օր կայ, որոնց մէջ արժան է գործ գոր-  
ծել ուստի պին օրեւը եկէք բժշկուեցէք, ու ոչ թէ  
15 շաբաթ օրը: Այն ատեն Տէրը պատմախան տուտ  
անոր ու ըստու, \*կեղծաւոր, ձեզմէ ամէն մէկը շա-  
բաթ օրը իր եղը կոմը եւը մասւէն չարձակեր, որպէս

\*Ուշագ, կեղծաւորներ

- 16 զի տանի ջուր տոյի; Հապա ասիկո որ Աքբահամի  
առջիկ էր, որ ահա տասնկութ տարի Սատանայ զա-  
նիկա կապեց, չե՞ր վայլեր որ շաբաթ օրը այն կա-  
17 պէն արձակուի Եւ երբ այս բանը ըստ, իրեն հա-  
կառակ կեցաղները տմէնն ալ ամօթով մնացին. ու  
բալը ժաղովսւրդը կ'ուրախանար այն տմէն փառա-  
ւոր գործերուն համար՝ սրոնք տնկէ կը լլային:
- 18 Եւ ըստ, Աստուծոյ թագաւորութիւնը թնչ բանի  
19 կը նմանի, ու ի՞նչ բանի նմանցնեմ զանիկա: Մանա-  
նեխի հատի նման է, զոր մարդ մը առաւ իր պարտէզը  
ձգեց. և ոճեցաւ ու մեծ ծառ եղաւ. ու երկինքի  
թռչունները անոր ճիշդերուն վրայ բնակեցան.
- 20 Դարձեալ ըստ, Աստուծոյ թագաւորութիւնը  
21 թնչ բանի նմանցնեմ: Խմբի նման է, զոր կին մը  
առաւ, երեք դրիւ ալիւրի մէջ պահեց, մինչև ամէնն  
ալ խմբեցաւ.
- 22 Եւ քաղաքները ու գեղերը պատշելով կը սորվե-  
23 ցընէր, ու գէպի Երուսաղէմ ճամբայ կ'ընէր: Եւ մէկը  
ըստ անոր, Տէր, քիչունը են ամսնկը որ պիտի փրա-  
կուին: Ոնիկաս ալ ըստ աննաց, Զանք ըրէք որ նեղ  
գոնէն մոնէք, քանիպ կ'ըսեմ ձեզի որ շատերը  
24 մոնել պիտի ուզեն և պիտի չիրնան: Անկէ ետեւ երր  
տանուտէրը եղէ ու դուռը դոցէ, և դուք սկսիք  
դուրսը կենալ, ու դուռը զարնել և բաել, Տէր, Տէր,  
բաց մեզի, ան ալ պատասխան տալով պիտի բոչ ձեզի,
- 25 Զեղ չեմ ճանչնար ուրկէ՛ էք, Ան ատեն պիտի  
սկսիք ըսել, Մենք քու առջեղ կերպնկը ու խմե-  
ցինք, և դուն մեր փողոցներուն մէջ սորվեցուցիր:
- 26 Եւ անիկա պիտի ըսէ, Զեղի կ'ըսեմ, Զեղ չեմ ճանչ-  
նար ուրկէ՛ էք, մէկդի կեցէք բնձմէ, բոլը անիրաւու-

- 28 թիւն գործողներդ: Հոն պիտի ըլլայ լալ ու ակրա-  
ներ կրծուել, երբ տեսնէք Սուրահամը ու Խառհակը  
և Յակովը ու բոլը մարգարէները Աստուծոյ թա-  
29 գուռութեսուն մէջ ու ձեզ դուրս հանած: Եւ  
պիտի գան արեւելքէն ու արեւմուտքէն և հիւսիսէն  
ու հարաւեն, ու պիտի բազմին Աստուծոյ Թագա-  
30 ւորութեսուն մէջ: Եւ ահա կան յետիններ՝ սրոնք  
առաջիններ պիտի ըլլան, ու կան առաջիններ՝ սրոնք  
յետիններ պիտի ըլլան:
- 31 Նոյն օրը մէկ քանի փարփացիներ եկան ու ըսին  
անոր, Ելլիր ու անու ասկէ, վասն զի Հերովդէս քեզ  
32 սպաննել կ'ուզգէ: Եւ ինք ըստ անոնց, Գացէք, այն  
աղօւէսին ըսէք, Ա՛չա ես գեեր կը հանեմ ու բժշ-  
կութիւններ կը կատարեմ այսօր և վաղը, ու երրորդ  
33 օրը պիտի կատարուիմ: Միայն թէ պէտք է որ այսօր  
ու վաղը և միւս օրը պարտիմ: վասն զի կարելի չէ որ  
34 մարգարէ մը Երուսաղէմէ գուրս կորսուի: Ով Երու-  
սաղէմ, Երուսաղէմ, որ մարգարէները կը սպաննէիր,  
ու քեզի զրկուումները կը քարէնծէիր, քանի ան-  
ու քեզի զրկուումները կը քարէնծէիր, ինչպէս հաւը  
գումը քու տղաններդ ժողվել ուզեցի, ինչպէս հաւը  
իր ձագերը թեներուն տուի իւ ժողվել, և դուք չուզե-  
35 ցիք: Ա՛չա ձեր տունը ձեզի աւերակ պիտի մնայ. սա-  
կայն ձեզի կ'ըսեմ, որ Ա՛լ զիս պիտի չտեսնէք, մին-  
չեմ դոյլ այն ժամանակը որ պիտի ըսէք, Օրհնեալ և  
ան որ Տէրոջը անսունովը կու դոյլ:

- 2 ու անոնք անոր կը պատաէին: Եւ ահա հսն ջրդողեալ  
 3 մարդ մը կար իր առջև: Եւ Յիսուս պատասխան  
 տուաւ ու խօսեցաւ օրինականներուն ու փարիսեցի-  
 4 ներուն՝ ըսելավլ՝ Արժան է շարաթթ օրը բժշկել Ա-  
 նոնք ալ լսու կեցան. և ինք ըսնեց զանիկա, բժշկեց  
 5 ու ճամփեց. Եւ պատասխան տալով՝ լսու անոնց,  
 Զեզմէ սրո՞ւն էշ կամ եղը հորը կյալաւ ըլլայ, ու  
 6 շուտ մը չհաներ զանիկա շարաթթ օրը: Եւ այս բա-  
 ներուն չկըցան անոր պատասխան տալ  
 7 Առակ մը զաւցեց այն հրաւիրուած մարդոց ալ-  
 երը տեսաւ թէ ի՞նչպէս առաջին բազմցները կ'ընտ-  
 8 րէին, ու ըսաւ անոնց: Երբ մարդէ մը հարսնիքի հրա-  
 ւիրուիս, առաջին բազմցներ վրայ մի նասիր. շըլայ  
 որ քեզմէ առելի պատաւուոր մէկն ալ հրաւիրուած  
 9 ըլլայ անկէ: Եւ անո՞ր քեզ ու զանիկա հրաւիրեց,  
 գայ զրացէ քեզի, Ասոր առել տուր, և անկէ ետե  
 10 սկսի տամթով յետին առեղը բռնել Հապա երը հրա-  
 ւիրուիս, գնա յետին առեղը նատէ, որպէս զի երը քեզ  
 հրաւիրովը գայ, քեզի ըսէ, Յարեկամ, վեր հրամնէ,  
 այն ատեն քեզի յետ նստողներուն առջև քեզի փառք  
 11 կ'ըլլայ: Վասն զի ամէն ով որ իր անձը կը բարձ-  
 րացնէ, պիտի խոնարհի, և ով որ իր անձը կը խոնար-  
 հեցնէ, պիտի բարձրանայ:
- 12 Ու զինք հրաւիրովին ալ ըսաւ, Երբ ճաշ կամ ընթ-  
 րիք կ'ընես, մի կանչեր քաւ բարեկամներդ, ոչ ալ քու-  
 եղաւրդ, և ոչ քու ազդուկաններդ, ու ոչ չու հարուստ  
 դրացիներդ, որ ըլլայ թէ անոնք ալ փոխարէնը քեզ  
 13 հրաւիրեն, ու քեզի հատուցում ըլլայ: Հապա երը  
 հացկերոյթ կ'ընես, աղքատներ, պակասաւոններ,  
 14 կաղեր ու կյորեր հրաւիրէ. Ու երանեիք պիտի ըլլաս,

- վասն զի անոնք չեն կրնար փոխարէնը քեզի հատու-  
 ցանել, քանզի արդարներուն յարութիւն առած տ-  
 անելը փոխարէնը քեզի պիտի հատուցուի:  
 15 Եւ սեղան նստողներէն մէկը երբ լսեց այս Էստէ՝  
 լսու անոր, Երանի՞ անոր որ Աստուծոյ թագաւորու-  
 16 թեանը մէջ հաց պիտի ուտէ: Եւ ինք ըսաւ անոր,  
 17 Մարդ մը մեծ ընթրիք ըրաւ ու շատ մարդիկ հրաւի-  
 րեց, Եւ ընթրիքն ատենը զրկեց իր ծառան, սրպէս զի  
 հրաւիրուածները կանչէ ընելու Եկէք, վասն զի արդէն  
 18 ամէն բան պատասխան է: Եւ ամէնը մէկէն սկսն ետ  
 քաշուիլ առաջինը անոր ըսաւ, Ես արտ մը ծախու  
 առի, ու պէտք է որ ելլէմ տեսնեմ զանիկա, կ'ա-  
 19 զատեմ քեզի, զիս հրաժարուած սեպէ: Եւ միւրը  
 ըսաւ, Հինդ զայդ եղ ծախու առի, ու կ'երթամ որ  
 զանոնք փորձեմ: կ'աղալչեմ քեզի, զիս հրաժարուած  
 20 սեպէ: Եւ միւրը ըսաւ, կին առի, ու անոր համար  
 21 չեմ կրնար գալ Եւ այն ծառան եկաւ ու իր տէրոջը  
 պատմեց այս բաները, այն տաեն բարկացաւ տանաւ-  
 տէրը ու ըսաւ իր ծառային, Շուտով քաղաքին հրա-  
 պարակները ու փողոցները ելիք, և աղքատները ու  
 պակասաւորները և կաղերը ու կողրերը հսն մոցուր:  
 22 Մատան ալ ըսաւ, Տէք, եղաւ ինչ որ հրամայեցիք,  
 23 ու տակաւին առել կայ: Եւ տէրը ըսաւ ծառային,  
 ելիք ճամբանները ու ցանդները, և գրանները սափաէ:  
 24 Հաս մտնելու, սրպէս զի տունս լեցուի: Քանզի կ'ըսեմ  
 ձեզիք, որ այն հրաւիրուածներէն մէկն ալ իմ ընթ-  
 րիքս համը պիտի ըսունէ:  
 25 Ու իրեն հետ շատ ժողովուրդներ կ'երթային. և  
 26 գաւռնալով անոնց ըսաւ, Եթէ մէկը ինծի կուդոյ,  
 ու չատեր իր հայրը և մայրը, ու կինը և զաւակ-

Ները, ու եղագրը և քոյրերը, նուև իր կետնկն ալ  
 27 չկրնար իմ աշակերտա ըլլալ: Եւ ով որ իր խաչը  
     չվերցներ ու իմ ետեւս գար, չկրնար իմ աշակերտա  
 28 ըլլալ Ղան զի ձեզմէ ո՞վ աշաբարակ մը շինել ու-  
     գելավ առաջ չնատիր ու հաշւ ըներ ծախքը, թէ  
 29 զանիկո լմցնելու ի՞րաւունքա ունի՞: Որ ըլլալ թէ  
     երբ հիմը ձեւ ու չինայ լմցնել բոլոր տեսնողները  
 30 սկսին զսնիկա ծաղր ընել Եւ ըսել թէ Այս մարդը  
 31 սկսու շինել ու չկրցաւ լմցնել Կամ թէ ո՞ր թա-  
     գաւորը ուրիշ թագաւորի մը հետ պատերազմելու  
     երթալավ առաջ չնատիր ու խորհիր, թէ արգեօք  
     տասը հալարով կրնայ դէմ կենալ անո՞ր որ քանն  
 32 հազարով եր քրց կու գայ: Ազու թէ ոչ քանի որ  
     անիկո հեռու է, գեսապն զիկելավ խաղաղութիւն  
 33 կը խնդրէ: Աչա պյափէս ալ ձեր մէջէն առէն մէկը  
     եթէ իր բոլոր ստացուածքէն ետ չկենայ, չկրնար իմ  
 34 աշակերտա ըլլալ Ազը աղէկի բան է, բայց եթէ աղը  
 35 իր համբ կորսնցնէ, ինչո՞վ պիտի համովայ: Ոչ հողի  
     ու ոչ թրիքի տեղ օգտագիր կ'ըլլայ, հառու զսնիկա  
     գուըս կը նետեն: Ան որ լսելու ականչ ունի՞ թողլ լսէ:

## ԳԼ. ԺԵ

1 Եւ բոլոր մոքասաւորները ու մեղաւորները անոր կը  
 2 մտենային իրմէ լսելու համար Եւ փարիսեցիները  
     ու գպիրները արտառնջ կ'ընէին ու կ'ըսէին, Ասիկա  
     մեղաւորները կ'ընդունի, ու անոնց հետ կ'ուտէ:  
 3 Եւ անիկա այս առալը խօսեցաւ անոնց՝ ըսելավ  
 4 Զեզմէ ո՞վ է այն մարդք որ հարիւր ոչխար ունենայ,  
     և անոնցմէ մէկը կորսնցնէ, իննառունինը չը ձգեր ա-

նապատին մէջ ու այն կրսուածին ետեւէն երթար,  
 5 մինչև զսնիկա գտնէ, Ու երբ կը գտնէ, ուրսիսնա-  
 6 լով իր ուսեւրուն քրց կը գնէ զսնիկա: Եւ տունը  
     գալավ կը կանչէ բարեկամները ու գրացիները, ու  
     անոնց կ'ըսէ, Ուրախ եղէք ինձի հետ, վասն զի իմ  
 7 կրսուած ոչխարը գտայ: Ձեզի կ'ըսէմ որ պյափէս  
     ուրսիսնաթիւն պիտի ըլլայ երկինքը մէկ մեղաւորի  
     համար որ կ'ապաշխարէ, քան թէ իննառունինը ար-  
     դարներու համար՝ որոնց տպաշխարութիւն պէտք  
 8 չէ: Կամ թէ ո՞վ է այն կինը որ տասը բրամ ունե-  
     նայ, ու եթէ գրամ մը կորսնցնէ, ճռագ չը վառեր,  
     ու տանը մէջ աւել զարներ և զգուշութեամբ  
 9 փնտուեր, մինչև գտնէ: Ու երբ կը գտնէ, կը կանչէ  
     բարեկամները ու գրացիները, և կ'ըսէ, Ուրախ եղէք  
     ինձի հետ, վասն զի իմ կորսնցուցած գրամն գտայ:  
 10 Այսպէս ալ ձեզի կ'ըսէմ, ուրսիսնաթիւն կ'ըլլայ  
     Ասուածոյ չըեւսունիներուն առջև մէկ մեղաւորի հա-  
     մար որ կ'ապաշխարէ:  
 11 Եւ ըստու, Մարդ մը երկու որդի ունէր. (12) Ու ա-  
     նոնցմէ պղտիկը հօրը ըստու Հայր, ուս ստացուածքէդ  
     բնէի իշնալու բաժինը ստու ինձի: ան ալ բաժնեց  
 12 անոնց է ունեցածը, Եւ ըստ օրեր չանցած՝ պղտիկ  
     որդին բոլոր բանները ժողվեց: ու հեռու երկիր մը  
     զնայ, և հնա անառակութեամբ աղքելավ իր ունե-  
     ցնայ, և հնա անառակութեամբ աղքելավ իր ունե-  
 14 ցածը գնացուց: Ու երբ ամենը համար գոկեց պա-  
     րին մէջ ստատիկ առվ մը եղաւ, ու ինք սկսաւ քա-  
 15 որ ըլլալ: Եւ գնաց պյն երկրին քաղաքացիներէն  
 16 նիկա՛ խոզեր արածելու համար: Եւ կը փափաքէ՛  
     խոզերուն կերած եղջիւրէն իր փարը լեցնել ու մէկը  
     խոզերուն կ'ըսէ:

- 17 չէր տար անորու Եւ ինքզինքին գալով ըստ, Քանի՛  
բանուորներ կան իմ հօրու ու առ հացով լեցւուծ, ու  
18 եւ հս սավամահ կը կրտսեմ, Ելլեմ; երթամ իմ  
հօրու, և ըսեմ անոր, Հայր, մեղանչեցի երկինքին  
19 դէմ ու քու առջեղ: Եւ ալ արժանի չեմ քու որ-  
դիք ըստելու, զիս քու վարձկաններէդ մէկուն պէս  
20 ըրէ: Ու ելաւ իր հօրը եկաւ, և մինչդեռ ինք շատ  
հետու էր, հայրը սեստ զանիկա ու գութը շարժե-  
ցաւ, և վազելով անոր պարանցին վրայ ինկաւ ու  
21 համբարեց զանիկա: Որդին ալ ըստ անոր, Հայր,  
մեղանչեցի երկինքին դէմ ու քու առջեղ, և ալ  
22 արժանի չեմ քու որդիք ըստելու Բայց հայրը ըստ  
իր ծառանիկուն, Հանեցէք առաջնին պատմուծոնը ու  
հագուցէք անոր, և մատանի դրէք անոր ձեռքը ու  
23 կօշիներ՝ անոր սաքերը, Եւ պարարտ զուարտկը բե-  
24 րէք, մորթեցէք, և ուտենք և ուրախ ըլլանք. Վասն  
զի այս իմ որդիս մեռած էր ու ողջնցաւ, կորսուած  
25 էր ու գտնուեցաւ, և սկսան ուրախ ըլլալ: Ու անոր  
մէծ որդին ապարակն էր, ու երբ կու գար ու տանը  
մօտեցաւ, նուազարաններուն և պարերուն ձայնը  
26 լսեց: Ու ծառանիներէն մէկը իրեն կանչելով՝ կը հար-  
27 ցնէր թէ այս ի՞նչ է: Անիկա ալ ըստ անոր, Եղ-  
բայրդ եկաւ, ու հայրդ պարարտ զուարտկը մորթեց,  
28 վասն զի ողջ առողջ ձեռք ձեգ զանիկա: Խակ ինք  
բարկացաւ ու չէր ուզեր ներս մտնել: ուստի իր հայրը  
29 գուրս ելլելով կ'աղաչէք անոր: Եւ անիկա պատմա-  
խան առաջի ըստ հօրը, Աշա այսչափ տարիէ որ քեզի  
կը ծառայեմ, ու բնու քու խօսքէդ գուրս չելոյ, ու  
ինձի երբ ուլ մը չստուիր, որ իմ բարեկամներուն  
30 հետ ուրախութիւն ընէի: Բայց երբ եկաւ այդ քու

- որդիդ, որ քու սոսայուածքդ բողերու հետ կերաւ,  
31 անոր մորթէցիր պարարտ զուարտկը: Եւ անիկա ըստ  
անոր, Որդեակ, գուն միշտ ինձի հետ եւ, ու իմ բո-  
32 լըր ունեցած քուկդ է: Անկայն պէտք էր ուրախ  
ըլլալ և ինդալ վասն զի այս քու եղրաբրդ մեռած  
էր ու ողջնցաւ, կորսուած էր ու գտնուեցաւ:

- 1 Ու իր աշակերտներուն ալ ըստ, Հարուստ մարդ  
մը կար, որ անտես մը ունէր, և անոր վրայով գոն-  
դատ եղաւ իրեն որպէս թէ իր ունեցածը կը փճա-  
2 ցնէ: Ուստի կանչեց զանիկա ու ըստ անոր, Ի՞նչ է  
այս զոր քեզի համար կը լսեմ: քու անսեռութեանդ  
հաշիւը տուր, վասն զի ալ չես կրնար անսես ըլլալ  
3 Եւ անտեսը իր մորքին մէջ ըստ, Ի՞նչ ընեմ, որպէ-  
շետեւ իմ տէրս անսեռութիւնը ինձմէ կ'առնէ: \*հո-  
ղագործութիւն չեմ կրնար ընկել՝ մուրալու կ'ամըչ-  
4 նամի: Գիտեմ ի՞նչ պիտի ընեմ, որպէս զի երբ ի՛  
անսեռութիւնէս մերժուիմ, զիս իրենց տունը ընդու-  
5 նին: Եւ իր տէրովը պարտականները մէկիկ մէկիկ  
իրեն կանչելով ըստ տուաջնին, Գուն իմ տէրովս  
6 մը բասփ պարտք ունիս Ան ալ ըստ, Հարիւը մոր  
ձէթ: և ըստ անոր, Գիրդ տու ու շուտով նաև  
7 յիսուն գրէ: Ետքը միւսին ըստ, Գուն ալ մը բչափ  
պարտք ունիս, և անիկա ըստ, Հարիւը քսա ցորեն.  
8 ու ըստ անոր, Գիրդ տու և ութասւն գրէ: Ու աէրը  
անիրաւ անտեսը գուլցից, որ խելացութիւնով ըրաւ.

վասն զի այս աշխարհին որդիները իրենց ցեղին մէջ  
 9 լուսայ որդիներէն առևիլի խելացի են: Եւ ես ալ ձեզի  
 կ'ըսեմ: Անիբառ մամմայիշին ձեզի բարեկամներ ըրէք,  
 որպէս զի Կ'ըր անիկառ պակսին", ձեզ յաւիտենական  
 10 լուսակարաններու մէջ ընդունին: Ան որ քիչ բանի  
 մէջ հաւասարիմ է, շատի մէջ ալ հաւասարիմ է:  
 և ան որ քիչի մէջ անիբառ է, շատի մէջ ալ անի-  
 11 բառ է: Ուստի եթէ անիբառ մամմային մէջ հաւա-  
 սարիմ չեղաք, ճշմարիտ հարբուսնեանը ո՞վ պիտի  
 12 հաւասայ ձեզի: Ու եթէ օտարին բանին մէջ հաւա-  
 13 տարիմ չեղաք, ձերը ո՞վ պիտի տայ ձեզի Ծառայ  
 մը չկրնար երկու տէրէրու ծառայութիւն ընել վասն  
 զի կա՛մ մէկը պիտի տաէ և միւսը սիրէ, կամ †մէ-  
 կուն պիտի յարի" և միւսը արհամանէ: չէք կրնար  
 ծառայել Աստուծոյ ու մամմայի:

14 Եւ փարիսեցներն ալ որոնք արծաթասէր էին,  
 այս ամէն բաները լսելով կը քամմահրէին զանիկառ  
 15 Եւ ըստ անսնց, Դուք եք որ մարդոց առջև ինքինք-  
 նիդ կ'արգարացնէք, բայց Աստուծո զիտէ ձեր սիր-  
 տերը. վասն զի մարդոց մէջ բարձր եղածը Աստուծոյ  
 16 առջև պիշտ է: Օրէնքը ու մարդարէները մինչև Յով-  
 հաննէն էին. անկէ ետեւ Աստուծոյ թագաւորու-  
 թիւնը կը քարոզուի, և ամէն մէկը անոր մէջ մտնելու  
 17 կ'արտարաց: Դիւրին է որ երկինք ու երկիր անցնին,  
 18 քան թէ օրէնքէն մէկ նշանագիր իշնաց: Ուլոր իր կինը  
 արձակէ և ուրիշ մը առնէ, շնութիւն կ'ընէ, և ով որ  
 երիկէ արձակուած կին մը առնէ, շնութիւն կ'ընէ:

\*Այսինքն, ձեր կ'արտարաթեան ժամանակը  
 †կամ, մէկը պիտի մէծ ար!

19 Հարուստ մարդ մը կար, որ ծիրանի ու բեհեղ կը  
 հագնէր, և ամէն որ փառաւորապէս ուրախութիւն  
 20 կ'ընէր: Ու Ղաղարս անունով աղքատ մը կոր վըր-  
 քերով լեցուն, որ անոր դրանը առջեւ դրաւած էր.  
 21 Եւ կը փափաքէր որ այն հարուստին սեղաննէն ինկած  
 փշտանքներէն իր փորը լեցնէ. նաև շուներն ալ կու  
 22 դպյին և անոր վէրքերը կը լուին: Ու եղաւ որ այն  
 աղքատը մեռաւ, ու հրեշտակները Աբրահամի գողը  
 տարին զանիկա: Հարուստն ալ մեռաւ ու թաղուե-  
 23 ցաւ, Եւ դժուկին մէջ երբ տանչանքի մէջ էր, իր  
 աչքերը վերցնելով հեռուէն տեսաւ Աբրահամը, ու  
 24 Ղաղարսոր անոր գողը հանդիւր նորոց: Եւ ինք աղա-  
 զակեց ու ըստ, Հայոց Աբրահամ, ողորմէ ինձի ու  
 զրկէ Ղաղարսոր, որպէս զի իր մատին ծովը ծուրը  
 թամթիւէ, ու զալցնէ իմ լեզուս, վասն զի այս բո-  
 25 ցին մէջ կը տանջուիմ Եւ Աբրահամ ըստ, Օրդ-  
 եակ, միտքդ բեր, որ գուն քու կետնիքիդ տակնը  
 քու բարիքներդ տանիր, նոյնպէս Ղաղարս՝ չարիք-  
 ներ. հիմա անիկա [հոս] կը միմիթարուի, ու գուն կը  
 26 տանջուիմ: Եւ պյու ամէն բաներէն զատ՝ մեր ու ձեր  
 մէջտեղ մեծ անդունդ մը կայ հասասատաւծ, ոյն-  
 պէս որ ձեզի անցնիլ ուղղողները չկրնան, ոչ ալ տա-  
 27 կէ մեզի հոլ սուրբները անցնին: Ան ալ ըստ, Ու-  
 րեմն կ'առաջէմ քեզի, Հայոց, որ զանիկա իմ հօրու  
 28 տունը զրկես, Բանիկ հինգ եղբայր ունիմ, որպէս զի  
 երեւաց աննաց վկայութիւն տայ, որ չըլլայ թէ անոնք  
 29 ալ այս չարչարտնիին տեղը դան: Եւ Աբրահամ  
 ըստ անոր, Անոնկ Մովսէսը ու մարգարէները ունին,  
 30 թող անսնց մափի ընեն: Ան ալ ըստ, Յաշ չպըր Աբ-  
 րահամ, հազար եթէ մեռելներէն մէկը անսնց եր-

31 թաղի, պիտի ապաշխարեն: Եւ անիկա ըստաւ անոր, կթէ Մալսէսի ու մարգարեներուն մատիկ չ'են ըներ, ոչ ալ եթէ մեռեներէն մէկը յարութիւն առնելու ըլլայ, պիտի համոզուին:

## ԳԼ. ԺԵ

- 1 Եւ ըստւ իր աշակերտներուն, Անկարելի է որ գոյթակղութիւններ չդան: բայց վայր անոր, որուն ձեռ-
- 2 քով կու գան: Անոր աւելի աղեկ է, որ անոր պարանցէն իշու աղացքի քար մը կախուի, ու անիկա ծովը ձգուի, քան թէ սյոս պատիկներէն մէկը գոյշ-
- 3 թակղեցնէ: Զգուշացքը ձեր անձերուն: Եթէ քու եղացրդ քեզի դէմ մեղանչէ, յանդիմննէ զանիկա:
- 4 ու եթէ ապաշխարէ, ներէ անոր: Եւ եթէ օրը եօթը անդամ քեզի դէմ մեղանչէ, ու օրը եօթը անդամ դառնայ քեզի ու ըսէ, Կ'ապաշխարէմ, ներես անոր:
- 5 Եւ առողեալները ըսին Տէրոջը Մեր հաւատաքը
- 6 աւելցուր: Եւ Տէրը ըստաւ, Եթէ մանանեխի հատի չափ հաւատաք առնենայիք, սյոս թթէնիին կրնայիք ըսել Արմատաքի խրուէ ու ծովուն մէջ տնկուէ, սյոն ալ պիտի հնապանդէր ձեզի:
- 7 Բայց ձեզմէ ո՞վ է այս հարդէ որ ունենայ երկրագործ կամ հովիւ ծառայ մը, որ անիկա երբ ագարակէն ուռան մանէ, շուտավ զրոցէ առոր թէ Անցիր
- 8 սեղան նստէ: Հապա լըսեր անոր թէ Պատրաստէ: իմ ընթրիքս, ու գօտիդ կապած ինծի ապաստորութիւն ըրէ, մինչեւ ես ուտեմ ու խմեմ: ու ետքը գուն ալ կեր ու խմէ: Միթէ շնորհական կ'ըլլայ պյն ծառային, երեն հրամացուած բաները կատարելուն հա-

- 10 մոր. չեմ կարծեր: Եղյնակէս դուք երբ բոլոր ձեզի հրամացուած բանները ընէք, բայց թէ Մենք անպիտան ծառաներ ենք, քանզի զայն որ պարտական էինք ընելու՝ ըրինք:
- 11 Ու եղաւ որ երբ ինք Երրուսաղէմ կ'երթար, Սա-
- 12 մարիայի և Գաղլիենյի մէջտեղէն կ'անցնէր: Ու երբ գեղ մը պիտի մտնէր, տապալ բարս մարգիկ հանդի- պեցան անոր, որոնք հեռուն կոյնեցան: Եւ ձայներնին վերցուցին ու ըսին, Ցիսուս վարդապետ, ողորմէ
- 13 մեզի: Եւ տեմնելով անոնց ըստաւ, Գայցէք դուք ձեզ քահանաներուն ցացուցեք: ու եղաւ որ երբ կ'երթապիլն, մաքրուեցան: Եւ անոնցմէ մէկը երբ տեսու
- 14 թէ թէ քժկուեցաւ, ետք գարձաւ ու մէծ ձայնով փառա- 15 մային, մաքրուեցան: Եւ անոնցմէ մէկը երբ տեսու թէ թէ քժկուեցաւ, ետք գարձաւ ու մէծ ձայնով փառա- 16 կու տար Աստուծոյ: Ու երեսի վայ անոր ոսքը կյ- նալով շնորհական կ'ըլլար անոր: և ինք Սամարացի 17 էր: Պատասխան տուաւ Ցիսուս ու ըստաւ, Զէ՞ որ 18 տանն ալ մաքրուեցան, իսկ սյն իննը ո՞ւր են: Այս օտարազգիէն զատ ու բնաւ չգտնուեցան՝ որ գառ- 19 նալով Աստուծոյ փառք տան: Եւ ըստաւ անոր, Ելիք գնաւ, քու հաւատաքդ քեզ բժշկեց:
- 20 Ու երբ փարիսեցները իրեն հարցուցին թէ Աս- տուծոյ թագաւորութիւնը ե՞րբ պիտի գոյց, պատաս- խան տուաւ անոնց ու ըստաւ, Աստուծոյ թագաւոր- 21 ըութիւնը բրաւած բաներով չգտր: Ու պիտի շքան թէ Աչա հոսէ, կամ Աչա հոն, վասն զի ահա Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսիդին է:
- 22 Աշակերտներուն ու ըստաւ, Օքեր պիտի գան որ գուք Որդւոց մարդոց օքրէն մէկը տեսնելու պիտի 23 փափաքիք, ու պիտի շտենէք: Եւ եթէ ըսկն ձեզի թէ Աչա հոսէ, կամ Աչա հոն, մի երթաք ու անոնց

- 24 մի հետեւիք: Վասոն զի ինչպէս փայլակը երկինքին  
տակ մէկ դիէն փէխ փայլատակելավ՝ մինչև երկինքին տակ  
միւս գին լցո կու տոյ, նոյնպէս պիտի ըլլայ Որդին  
25 մարդոյ իր հուշան օրը: Միայն թէ պէտք է որ ինք ա-  
ռաջ շատ չորչարանքներ կը ու մերժուի այս ազգէն:  
26 Եւ ինչպէս Նոյի օրերը եղաւ, այնպէս պիտի ըլլայ Որդ-  
27 ւոյ մարդոյ օրերն ալ: Կուտէին, կը խմէին, կին  
կ'առանէին, երկան կը արուէին, մինչև այն օրը որ  
նոյ տապանել մտու, և ջրհողեղը եկաւ ու ամէնը  
28 կորսնցուց: Նմանապէս, ինչպէս Ղովանի օրերը եղաւ,  
կ'ուռաէին, կը խմէին, ծախու կ'առանէին, կը ծախէին,  
29 կը անկէին, կը շինէին. Բայց այն օրը որ Ղովան  
գոմէ ելաւ, երկինքնեւն կրակ ու ծծումք տեղաց և  
30 բոլորն ալ կորսնցուց. Նոյնպէս պիտի ըլլայ այն օրը  
31 օրուն մէջ Որդին մարդոյ պիտի յայտնուի: Այն օրը  
ան որ տանիքին վրայ է և իր կարասիներ տանը մէջ՝  
թող վար չիջնէ զանոնք առանելու, և ան որ արտին  
32 մէջ է, նոյնպէս թող ես չդաւնոյ: Միաբերնիդ բե-  
33 րէք Ղովանի կինը Ով որ իր կեանքը կ'ուղէ ապրե-  
ցընէլ պիտի կորսնցնէ զանիկա, և ով որ կը կորսնցնէ:  
34 պիտի ապրեցնէ զանիկա: Ձեզի կ'լսեմ: Այն գիշերը  
էնէ երկու հոգի մէկ անկողինի մէջ ըլլան, մէկը  
35 պիտի առնուի ու միւսը ձգուի. Եւ էնէ երկու կին  
մէկտեղ աղջալու րիլան, մէկը պիտի առնուի ու միւսը  
ձգուի, և էնէ երկու հոգի արտի մը մէջ ըլլան, մէկը  
36 պիտի առնուի ու միւսը ձգուի: Եւ պատասխան տա-  
37 լով ըստին անոր, Տէր, ո՞ւր պէտի ըլլայ այս բանը: Ան ալ  
ըստ անոնց. Ուր մարմին կայ, հոն պիտի ժողվուին  
արձիւները:

- 1 Անոնց տառակ մըն ալ ըստ այս բանին վեպավով՝ թէ  
պէտք է ամէն տառեն աղօթք ընել ու չտնձրանալ:  
2 Ըստ, Դատաստոր մը կար քաղաքի մը մէջ, որ Աս-  
3 տուծմէ չէր վախնար ու մարդէ չէր ամշնար: Եւ նոյն  
քաղաքին մէջ որբեարի մը կար, որ անոր կու գար  
ու կ'լսէր, իլրաւունք ըրէ ինծի ու առաջէ գէ իմ ո-  
4 սփէսա: Եւ անիկա ժամանակ մը չէր ուղեր անոր  
5 ժողի չեւ բայց ետքը ըստ մարդէ չեմ ամշնար, Գոնէ  
այս որբեարիին զիս ձանձրացնելուն համար իրեն  
իրաւունք ընեմ, որպէս զի չգայ ամէն տառեն զիս  
6 թափանձէ: Եւ Տէրը ըստ, Լուցէք, անիրաւ դա-  
7 տուծորը ինչ կ'լսէ: Հապա Աստաւած իր ընտրեալ-  
ներուն իրաւունք պիտի չնէ՞, որոնք ցորեկ ու գիշեր  
իրեն կ'աղջալակեն, թէեւ երկանայմիտ ալ ըլլայ  
8 նոնց վրայ: Զեզի կ'լսեմ որ շուտով անոնց իրաւունք  
պիտի ընէ, բայց Որդին մարդոյ երբ գոյ, արդեք  
հաւատաք պիտի գտնէ՞ երկրի վրայ:  
9 Եւ մէկ քանիներուն, որոնք իրենց անձերուն վրայ  
կը վստահանային թէ արդար են, և ուրիշները կ'ա-  
10 նարդէին, այս առակը ըստ. Երկու մարդ ելան տա-  
ճարը աղօթք ընելու, մէկը փարփացի ու միւսը մար-  
11 տուոր: Փարփացին կայներ էր, և առանձին սպակէս  
աղօթք կ'լսէր. Ով Աստաւած շնորհակալ եմ քեզ-  
մէ, որ ուրիշ մարդոց պիտի չեմ, յափշտակող անի-  
12 րու, շնացող և կամ այս մաքսաւորին պէս: Հող-  
շաբաթը երկու անգամ ծօմ կը պահէին, ու բոլոր  
13 ստացուածքիս տասանորդը կու տամ, Եւ մաքսաւորը

- Հեռուն կողման էր, ու չեր ուղեր տչքն ալ երկինք վերցնել հապս իր կուրծքը ծեծելով կ'ըսէր, Աս-  
14 տուած, սղորմէ ինձի մեղուորիս Զեղի կ'ըսեմ թէ ասիկա այն միւսէն աւելի արդարացած իր տունը իջաւ, վասն զի ուլ որ իր անձը կը բարձրացնէ՛ պիտի խոնարհի, և ով որ իր անձը կը խնապչէցնէ՛ պիտի բարձրանայ:
- 15 Մանր աղաք ալ բերին իրեն, սրպէս զի անոնց գոշի. ու աշակերտաները տեսնելով կը յանդիմանէին զանոնք Բայր Յիսուս զմնանք իրեն կանչելով՝ ըստ, թող տուեք այդ մանր տղոցը որ ինձի գան, և մի արգիլէս տառնք, վասն զի Աստուծոյ թագաւորու-  
17 թիւնը ոյցպիսիներուն է: Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ով որ Աստուծոյ թագաւորութիւնը պատիկ տղու մը պէս շնորունի, բնաւ պիտի շմանէ անոր մէջ:
- 18 Եւ իշխան մը հարցուց անոր ու ըստ, Բարի վարդապետ, Ի՞նչ գործեմ սրպէս զի յաւիտենական  
19 կեանքը ժառանգեմ: Եւ Յիսուս ըստ անոր, Խնջո՞ւ զիս բարի կ'անուանես, մէկէն զատ բարի չկոյ, որ է
- 20 Աստուծ: Պատուիրանքները գիտես. Շնութիւն մի ըներ, Սպանութիւն մի ըներ, Գողութիւն մի ըներ,  
Սուտ վկայութիւն մի ըներ, Քու հայրդ ու մայրդ  
21 պատուէ: Ան ալ ըստ, Աստոնք ամէնը մանկութե-  
22 նէս ի վեր պահեր եմ: Զայս լսելով Յիսուս ըստ ա-  
նոր, Բան մըն ալ պակաս է քեզի. քու բոլոր ունեցած դժախէ և աղքաներուն բաշխէ, ու երկինքը  
23 գանձ պիտի ունենաս, և եկուր իմ ետքէս: Անիկա երը պյու բաներ լսեց, արտակցու, վասն զի ըստ հա-  
24 բաստ էր: Եւ Յիսուս երը զանիկա արտամած տեսու,  
ըստ, Որչափ դժուար է անոնց որ հարստութիւն

- 25 ունին, Աստուծոյ թագաւորութիւնը մօնել: Քանզի գիւրին է որ ուղար տաեղին ծակէն անցնի, քան թէ  
26 հարուստը Աստուծոյ թագաւորութիւնը մօնէ: Եւ աննոնք որ լսեցին, կ'ըսէին, Ալ ո՞վ կրնայ փրկուիլ:  
27 Եւ ինք ըստ, Մարդոց կողմանէ անկարելի եղած  
28 բաները Աստուծոյ կողմանէ կարելի են: Ու Փետրոս ըստ, ԱՀա մենք ամէն բան թաղուցինք և քու ետևէդ  
29 եկոնք: Ու անիկա ըստ, անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ Մարդ մը չկոյ որ թողուց տուն, կամ ծնողը, կամ եղայլունը, կամ կին, կամ որդիներ  
30 Աստուծոյ թագաւորութեանը համար, Որ պիտի չտանէ բացմապատիկ այս ատենին մէջ և գալու աշխարհին մէջ յաւիտենական կեանքը:
- 31 Եւ տաստերկուքը իր քով առնելով՝ ըստ անոնց, ԱՀա մենք Նրասաղէմ կ'ելլենք, և մորգարէներուն ձեռքավ Որդւոյ մարդոց համար բոլոր գրուածները  
32 պիտի կատարուին: Վասն զի Տէթանսոններուն պիտի մատնուի, ու ծազր պիտի ըլլոյ և պիտի նախատուի,  
33 ու պիտի թքնեն անոր, Եւ պիտի ծեծեն ու սպաննեն զանիկա, ու երրորդ օրը յարութիւն պիտի առնէ:  
34 Բայց աննոնք պյու բաներէն մէկն ալ չհակացան. ու պյու խօսքը անոնցմէ ծածկուած էր, և ըստ բաները չէին իմանար:
- 35 Ու եղաւ որ երը ինք Նրկանի կը մօտենար, կը մը  
36 մը ճամբուն քով նստեր էր մուրալու: Երբ լուց բազմութեանը անցնիլը, հարցուց թէ Ի՞նչ է այն:  
37 Եւ իրեն ըսին թէ Յիսուս Նազուրեցի կ'անցնի:  
38 Ուստի աղապակեց ու ըստ, Յիսուս, Որդի Դաւթի:  
39 ողորմէ ինձի: Եւ աննոնք որ առջեւէն կ'երթային, կը յանդիմանէին զանիկա, սրպէս զի լսէ. բայց անիկա

ա՛լ աւելի կ'աղաղակէր, Որդի Դաւթի, ողորմէ  
40 Բնձի Եւ Յիսուս կրնազ առնելով՝ հրաման ըստ որ  
զանիկա իրեն բերեն, ու երբ անիկա մօտեցաւ, հար-  
41 ցուց անոր ու ըստ, Խճչ կ'ուղես որ քեզի ընեմ: ա-  
42 նիկա ալ ըստ, Տէր, որ աշքերս բացուին: Եւ Յի-  
43 սուս ըստ անոր, Թողլ բացուին: քու հաւատքդ  
44 քեզ բժշկեց: Եւ իսկոյն անոր աշքերս բացուեցան,  
ու անոր ետեւէն կ'երթար, և փառք կու տար Առ-  
առածոյ: բայր Ժողովուրդն ալ տեսնելով՝ զԱստուած  
կը դովաբանէրն:

## ԳԼ. ԺԹ

1 Եւ մտնելով Երկբայի մէջն կ'անցնէր: (2) Եւ ա-  
հա մարդ մը կար, անունը Զաքէս ըստած, որ մաք-  
3 սասկէտ էր ու ինք հարուստ էր: Եւ կ'ուղէր տեսնել  
թէ ո՛վ է Յիսուս, ու բազմութենէն չէր կրնար, վասն  
4 զի հասակով կարծ էր: Եւ առաջ վագեց ու ժամ-  
տապ գլուխի մը վրայ ելաւ, սրպէս զի զանիկա տեսնէ,  
5 վասն զի անկէ պիտի անցնէր: Ու երբ Յիսուս այն  
տեղը եկաւ, վեր նայելով զանիկա տեսաւ, ու ըստ  
անոր, Զաքէս, շուտ ըրէ, ասկէ վար իջիր, վասն զի  
6 պէտք է Բնձի այսօր քու տունդ կենալ Եւ արտո-  
րալով վար իջաւ, և ուրախութեամբ ընդունեց զա-  
7 նիկա: Երբ ամէնն ալ տեսան, կը արտանշէին ու կ'ը-  
սէին թէ Մեղաւոր մորդու քով մտաւ իջեան ընե-  
8 լու: Եւ Զաքէս կոյնեցաւ ու ըստ Տէրոջը, Տէր,  
ահա իմ պէնեցածիս կէոր աղքատներուն կու տամ:  
ու եթէ զրպարտութեամբ մէկաւն զիկանք ըրած եմ:  
9 չըրեքպատիկ կը հասաւցանեմ անոր: Եւ Յիսուս ըստ

## ԳԼՈՒԽ ԺԹ

անոր, Այսօր այս տանը փրկութիւն եղաւ, քանզի  
10 ասիկա ալ Արբահամի որդի է: Վասն զի Որդին մար-  
դու զի եկաւ որպէս զի կորսուածը վնասուէ ու փրկէ:  
11 Ու երբ անոնք այս բաները կը լսեին, առանկ մըն  
ալ ըստ իր երուարդէմ մօտենալուն համար, և ա-  
նոնց ոյնպէս կարծելուն համար թէ շուտ մը Աս-  
12 տուծոյ թագաւորութիւնը պիտի յայտնուի: Ուստի  
ըստ, Աղնուական մարդ մը հեռաւ երկիր գնաց՝  
13 իրեն թագաւորութիւն առնելու և գաւառալու: Եւ  
իր տասը ծառաները կանչելով՝ տասը մնաս տառա-  
տնոնց, ու ըստ անոնց, բանեցուցէք առանց մինչեւ  
14 ես գամ Եւ անոր քաղաքացիները զանիկա կ'ատեին,  
ու գեսապննէր զրկեցն անոր ետեւէն, ըսելով թէ  
Զենք ուղեր որ տափկա մեր վրայ թագաւորութիւն  
15 ընէ: Ու եղաւ որ երբ անիկա թագաւորութիւնը առ-  
նելով ետ գարձաւ, իրեն կանչել տուու այն ծա-  
ռաները որոնց սասկէ տուեր էր, որպէս զի գիտնայ  
16 թէ ո՛վ ի՞նչ շահ ըրած է: Եւ տուաջնըն եկաւ ու  
17 ըստ, Տէր, քու մնասդ տասը մնաս շահ ըրու: Եւ  
ըստ անոր, Ապրիս, բարի ծառայ: որովհետեւ քիչ  
ըստնին մէջ հաւատարիմ եղար, տասը քաղաքի վրայ  
18 իշխանութիւն ունեցիր: Ու երկրորդը եկաւ ու ըստ,  
19 Տէր, քու մնասդ հինգ մնաս շահ ըրու: Եւ ըստ  
20 անոր, Դուն ալ հինգ քաղաքի վրայ եղիր: Եւ ու-  
րիշ մը եկաւ ու ըստ, Տէր, ահա քու մնասդ զըր  
21 թաշկինակի մէջ ծրարտ կը պահէի. Քանզի կը  
վախնայի քեզմէ, վասն զի դուն իիստ մարդ մըն եւ,  
չդրած բանդ կը վերցնես ու չերմանածդ կը հնձես:  
22 Եւ անիկա ըստ անոր, Քու բերնէդ քեզ պիտի դա-  
տեմ, ով չար ծառայ, գիտէիր որ ես իիստ մարդ

մըն եմ, չդրած բանս կը վերցնեմ ու չսերմանած ու  
 23 կը հնձեմ: Եւ ինչո՞ւ համար իմ ստակա սեղանաւոր-  
 ներուն չտուիր, որպէս զի ես եկած տանեն շահօվը  
 24 տանէի զանիկա: Եւ հոն կայսոնոներուն ըստ, Ա-  
 ռ. և առ տակէ մնասը ու առուէք անոր որ տարը մնաս  
 25 անի: (Եւ ըսին իբեն, Տէր, անիկա տարը մնաս ունի: )  
 26 Քանզի կ'ըսեմ ձեղի, թէ ամէն ունեցոյին պիտի  
 տրուի, և չտնեցովին ունեցածն ալ անկէ պիտի  
 27 առնուի: Բայց այս իմ թշնամիներս, որոնք չէին ու-  
 զեր որ իրենց վրայ թագաւոր ըլլամ, հոս րերէք ու  
 28 իմ առջևս սպաննեցէք: Եւ այս բաները խօսելէն  
 ետև՝ յառաջ գնաց երաւառդէմ կլելու:

29 Ու եղաւ որ երր թեթփագէի ու թեթանփայի մօ-  
 տեցաւ գեղի այս լեռը որ Զիթենեաց լու կ'ըսուի,  
 30 իր աշակերտաներէն երկուքը քրկեց: Եւ լսու, Գացէք  
 հէ գիմացի գեղը, և անոր մէջ մտնելուդ պէս պիտի  
 գտնէք կապուած աւանսկ մը, որուն վրայ բնաւ մորդ  
 31 մընսուած չէ, արձակեցէք զանիկա ու բերէք: Եւ եթէ  
 մէկը ձեզի հարցնէ թէ ինչո՞ւ կ'արձակէք, այսպէս  
 32 ըսէք անոր, թէ Տէրոջը պէտք է: Երր գացին անոնք  
 որ զիկուեցան, ինչպէս իրենց զրուցեր եր՝ գտան:  
 33 Ու երր աւանսկը կ'արձակէին, անոր տէրերը ըսին  
 34 անսնց, ինչո՞ւ կ'արձակէք այդ աւանսկը: Անսնք  
 35 ալ ըսին, Տէրոջը պէտք է: Եւ զանիկա Յիասուի ըե-  
 րին ու իրենց հանդերձները աւանսկին վրայ ձգելով  
 36 Յիասուը հեծցուցին: Ու երր կ'երթար, իրենց հան-  
 37 դերձները ճամբուն վրայ կը փուէին: Ու երր ա'լ մօ-  
 տեցաւ, և Զիթենեաց լեռանը զառ ի վայրէն կ'իշ-  
 նէր, աշակերտաներուն բոլոր բազմութիւնը սկսաւ  
 սըրափութեամբ զԱստուած օրչնել բարձր ձայնով

այն բալոր հրաշեներուն համար զրոնք տեսեր էին.  
 38 Ու կ'ըսէին, Օրչնեալ է այդ թագաւորը որ Տէրոջը  
 անսւնովը կու գոյ, երկինքի մէջ խաղաղութիւն, ու  
 39 փառք՝ բարձրութեան մէջ: Եւ բազմութեանը մէջէն  
 փարփացիներէն մէկ քանիները ըսին անոր, Վարդա-  
 40 պէտ, այդ քու աշակերտաներդ յանդիմանէ: Եւ ա-  
 նիկա պատասխան տուու ու լսու անոնց, Զեզի  
 կ'ըսեմ, եթէ ատոնք լսու կենան, քարերը պիտի ա-  
 զաղակէն:

41 Ու երր մօնեցաւ, քաղաքը տեսնելով լացաւ անոր  
 42 վրայ և լսու, Գոնէ այս քու օրուանդ մէջ գիտնա-  
 յեր քու խաղաղութիւնդ. բայց հիմն ծածկուեցաւ  
 43 քու աչքերէդ: Վասն զի օրեր պիտի գան քու վրադ:  
 որ թշնամիներդ քու բարձրագր պատնէշ պիտի շի-  
 նեն, ու քեզ պիտի պաշարէն, և ամէն կողմէ քեզ  
 44 նեղը պիտի ձգեն: Եւ հիմնայտանի պիտի ընեն քեզ  
 ու քու մէջդ եղած զաւակներդ, և քար մը քարի  
 վրայ աւելնեին պիտի ձխողուն քու մէջդ, անոր հա-  
 մոր որ Ճանչոցար քու այցելութեանդ ժամանակը:  
 45 Եւ ատճարը մօնելով սկսաւ գուրս հանել անոր  
 46 մէջ ծախողները և գնողները: Եւ լսու անոնց, Գըր-  
 ուած է թէ իմ տաւնս աղօթքի տուն է. բայց դուք  
 ատիկա աւազակներու այր ըրիք:  
 47 Եւ ամէն օր ատճարին մէջ կը սորվեցնէր, բայց  
 քահանայագետները ու գպիները և ժողովուրդին  
 զիսաւորները կը փնտուին թէ ինչպէս կարսնցնեն  
 48 զանիկա: Ու բան մը չէին կրնար գտնել թէ ինչ  
 ընեն, վասն զի բալոր ժաղավուրդը անոր կապուեր էին  
 մտիկ ընելու:

- 1 Ու եղաւ որ պյն օրերէն մէկը, երբ տաճարին մէջ ժողովուրդին կը սարվէցնէր և աւետարանը կը քառաղբը, քահանայապետները ու գվիրները ծերերուն
- 2 Հետ մէկաեղ զրայ հասան, Եւ անոր հետ խօսեցն՝ ըսելով. Զըսուցէ մեզի, ի՞նչ իշխանութիւնով կ'ընես այդ ըստները կամ ո՞վ է այդ իշխանութիւնը քեզի
- 3 տուողը Պատասխան տուոււ ու ըստ անոնց, Ես ալ
- 4 ձեզի բան մը հարցնեմ, և ըսէք ինձի. Յովհաննէսի
- 5 մկրառութիւնը երկինքէ՞ն էր թէ մարդոցմէ. Եւ ա-
- 6 նոնք իրենց մէջ խորհեցան ու ըսին, Նմէ ըսենք՝ Երկինքէն, պիտի բաէ, Հապա ինչո՞ւ չհաւտասացեք անոր. Իսկ եթէ ըսենք՝ Մարդոցմէ, ըսլը ժողովուրդը մեզ պիտի քարկոծէն, վասն զի հարուրդ համազւած
- 7 են թէ Յավշաննէս մարդունք էր. Եւ պատասխան
- 8 տուին թէ չեն գիտեր ուրկի՛ էր. Եւ Յիտաւ ըստ անոնց, Ես ալ ձեզի չեմ ըսէք թէ ի՞նչ իշխանութիւնով կ'ընէմ այս բանը.
- 9 Սկսաւ այս առաւել զրացել ժողովուրդին. Մարդ մը այդի անկեց և զանիկա մշակներու յանձնեց, ու
- 10 ինք օտար երկիր երթալով՝ շատ ժամանակ մնաց. Եւ ատենին ծառայ մը զրկեց մշակներուն, որպէս զի այդին պատուզէն անոր տան. Իսկ մշակները ծեծե-
- 11 ցին զանիկա ու պարապ ճամփեցին, Եւ ուրիշ ծառայ մըն ալ զրկեց. Իսկ անոնք զանիկա ալ ծեծե-
- 12 ցին, անարդեցին ու պարապ ճամփեցին. Ու երրորդ մըն ալ զրկեց. Իսկ անոնք զանիկա ալ զիրաւորեցին
- 13 ու գուրս հանեցին. Այն ատեն պայտին ակըլը ըստ, ի՞նչ ընեմ. Իմ սիրելի որդիս զրկեմ, թէրեւ

- 14 զանիկա տեսնելով ամչնան. Բոյց մշակները երբ տեսան զանիկա, իրարու հետ խորհուրդ ըրին՝ ըսելով Ասիկա է ժառանգը, եկէք զանիկա սպաննենք, որպէս զի ժողովուրդին կը ապաննեցին. ուստի այդ պին գի ժառանգը հանեցին ու ապաննեցին. ուստի այդ գինը ի՞նչ պիտի ընէ անոնց. Պիտի գոյ ու կորսնցն պյն մշակները, և այդին ուրիշներու պիտի կուրուցն պյն մշակները, թէ այդին ուրիշներու պիտի կուրուցն պյն մշակները, իսին, Քա՛ւ լիցին; Եւ ինք անոնց նայելով ըստաւ, Հապա ի՞նչ է այս գրուածը, թէ Այն քարը զըր շինողները մերժեցին, անիկա անկինչին
- 18 Գլուխը եղաւ. Ամէն ով որ պյն քարին վրայ իշնայ, պիտի կուրուցն, և որու վրայ որ իշնայ, պիտի փորեւ պանիկա, Եւ քահանայապետները ու գովիները կը վնասուեն թէ Էւալեկ նոյն ժաման ձեռք զորնեն անոր, բոյց ժողովուրդին վախցան. քանդի իմացան որ պյն առաւելը իրենց համար ըստաւ:
- 20 Ու Եւ յարդու ու ունչ սպասելով զրկեցին քանի մը խալերպի մարդիկ, որոնք կեղծաւորութեամբ ինքզինինին արդար կը ձևացնէին, որպէս զի զանիկա խօսութ ըսնեն տերութեան և կուսակալին իշխանութեանը զանիկա մասնելու. Ու անոր հարցոցին՝ ըսելով Վարդապետ, զիտենք որ շիտակ կը խօսի ու կը արվեցնես, և աշառութիւն չես ըներ հապա ճշմարտութեամբ Աստուծոյ Ճամբան կը արվեցնես.
- 21 Նութեամն զանիկա մասնելու. Ու անոր հարցոցին՝ ըսելով Վարդապետ, զիտենք որ շիտակ կը խօսի ու կը արվեցնես, և աշառութիւն չես ըներ հապա ճշմարտութեամբ Աստուծոյ Ճամբան կը արվեցնես.
- 22 Մեզի արժանի է Կայսրին տուրք տալ թէ ոչ. (23) Ու անոնց խորամանկութիւնը հասկնալով ըստ անոնց,
- 24 ի՞նչո՞ւ զին կը փորձէք. Յուցուցէք ինձի գտնէկան մը. Որո՞ւն պատկերը ու զիրը ունի Քամ, Պատասխան
- 25 տուին ու ըսին, Կայսրինը; Եւ ինք ըստ անոնց, Ուրեմն զայն որ Կայսրին է Կայսրին տուէք, և զըն որ

- 26 Աստուծոյն է՝ Աստուծոյ բարեւու։ Եւ չկըցան զանիկա  
խօսքով մը բանել ժողովութիւն առջև, ու զարմա-  
նալով անոր պատասխանին վասյ՝ լուս կեցան։
- 27 Եւ սադուկեցիներէն ամսնկը եկան, (սրճնք հակառա-  
կութիւն կ'ընեն թէ յարութիւն չկայ,) և անոր հար-  
28 ցացին Ըստով Վարդապետ, Մավևս մեղի գրեց, եթէ  
մէկուն եղբայրը կին ունենալով մեռնելու ըլլայ, ու  
մեռած ատենը զաւակ չունենայ, անոր եղբայրը առնէ։
- 29 այն կինը և իր եղբայրը զաւակ հանէ։ Արդ եօթը եղ-  
բայրներ կային. ու առաջինը կին մը առնելով գաւակ  
30 չունեցած մեռաւ։ Երկրորդն ալ առաւ այն կինը և  
31 ինք ալ մեռաւ առանց զաւակի։ Երրորդն ալ առաւ  
զանիկա. նմանապէս եօթն ալ, ու զաւակ չձգեցին  
32 ու մեռան։ Ամէնէն ետքը կինն ալ մեռաւ։ (33) Ու-  
րեմն յարութեան ատենը անոնցմէ որո՞ւն կինը պիտի  
34 ըլլայ, վասն զի եօթն ալ զանիկա կին ունեցան։ Եւ  
Յիսուս պատասխան տալով անանց ըստաւ, Այս աշ-  
խարհին որդիները կին կ'առնեն ու երկան կը տրուին։
- 35 Բայց անսնկ որ արժանի պիտի ըլլան այն աշխարհին  
հանելու ու մեռելներէն յարութիւն առնելուն,  
36 ոչ կին կ'առնեն և ոչ երկան կը տրուին. Որպէս ետք  
մ'լ չեն կինար մեռնիլ. քանզի հրեշտուկներուն հա-  
ւասար են, ու Աստուծոյ որդիներ են, վասն զի յա-  
37 րութեան որդիներ են։ Բայց մեռելներուն յարու-  
թիւն առնելը Մավևս ալ իմացուց մորենիին պար-  
հանեան մէջ, երբ կը կոչէ Տէրը՝ Արքահամբ Աստ-  
ուածը, ու Խաչակի Աստուածը, և Յակոբ Աստ-  
38 ուածը։ Ու Աստուած մեռելներուն Աստուածը չէ,  
հապս կենդանիներուն, վասն զի ամէնը անոր կին-  
39 դանի են։ Եւ դպիրներէն մէկ քանին պատասխան

- 40 տաւին ու ըստն, Վարդապետ, աղեկ ըստր։ Ու ա՛լ  
մէկը համարձակութիւն չէր ըներ անոր լսն մը  
հարցնելու։
- 41 Եւ ըստ անսնց, Խնչպէս կ'ըսեն թէ Քրիստոս  
42 Դաւիթի որդին է. Եւ ինք Դաւիթ Սաղմաներուն  
գիրքին մէջ կ'ըսէ, Տէրը իմ Տէրուս ըստ, նստէ իմ  
43 աջ կողմն, Մինչեւ քութշնամիներդ սափերուդ պատ-  
44 ռաւանդան ընեմ։ Ուրեմն Դաւիթ որ զանիկա Տէր կը  
կոչէ, ինչպէս անիկա անոր որդին կ'ըլլայ։
- 45 Եւ ըստ Ժողվուրդին առջև ըստ իր աշակերտ-  
46 ներուն, Զգուշացեք դպիրներէն, որոնք կ'ուղեն փա-  
ռաւոր հանդերձներով պարախը և շուկաներուն մէջ  
ըստրեներ կը սիրեն. ու Ժողվուրդաներուն մէջ առա-  
ջին աթօտները և ընթրիքներու մէջ առաջին բաղմաց-  
47 ները. Որոնք որբեարիներուն տուները կ'ուտեն, ու  
մարդոց երենալու համար աղօթքը կ'երկնցնեն. ա-  
նոնք աւելի գատապարտութիւն պիտի ընդունին։
- ԳԼ. ԻԱ.
- 1 Ու նայելով տեսաւ հարստաները որոնք իրենց ըն-  
2 ծաները գանձանակը կը ձգէին։ Տնանկ որբեարի մըն  
3 ալ տեսաւ, որ հոն երկու լսմայ ձգեց։ Ու ըստ,  
ձշմարիս կ'ըսեր ձերի որ սյս աղքատ որբեարին  
4 ամէնէն աւելի ձգեց. Վասն զի ամէն ամսնկ իրենց  
աւելցածէն Աստուծոյ ընծաներուն մէջ ձգեցին,  
բայց ասիկա իր չբաւորութեանէն բոլոր իր ունեցած  
պարսուող ձգեց։
- 5 Ու երբ մէկ քանիները ատամորին համար կ'ըսէին  
թէ Գեղեցիկ քարերով ունուերներով զարդարուած

6 Ե, ըստ, Այդ բաները զորոնք կը տեսնեք, օրեր պիտի  
գան որ այն ատեն քար մը քաղի վայ պիտի չմնայ որ  
7 չքակատի: Հարցուցին իրեն ու ըսին, Վարդապետ,  
հ՞ըր պիտի ըլլան այդ բաները, և ի՞նչ է նշանը՝ երբ  
8 այդ բաները պիտի ըլլան: Ան ալ ըստ, Գդոյշ կեցեք,  
չխարսութք, վասն զի շատերը պիտի գան իմ՝ անունովս  
ու ըսեն թէ Ես եմ Քէրտոս, ու ժամանակը մօտե-  
9 ցած է, ուրեմն անոնց եակեն չերթաք: Բայց երբ լակք  
պատերազմեր և խռովութիւններ, մի վախճառ, վասն  
զի պէտք է տուաջ այս բաները ըլլան, բայց վախ-  
ճանը իսկցին չէ: Այն ատեն ըստ անոնց, Ազգ աղդի  
վրայ պիտի ելլէ, ու թագաւորութիւն թագաւորու-  
11 թեան վրայ: Եւ տեղ տեղ մեծ երկրաշարժութիւններ  
պիտի ըլլան, ու սովէր և մահարաժամներ,  
նաև երկնքեն տակար բաներ և մեծ նշաններ պիտի  
ըլլան: Բայց այս ամէն բաներէն տուաջ իրենց ձեռ-  
քերը ձեզի պիտի զարնեն ու հալածեն, և ժաղավա-  
րաններու ու բանտերու պիտի մատնեն, և իմ՝ ան-  
ուանն համար թագաւորներու ու կուսակալներու  
13 առջև պիտի տարուիք: Եւ այ բաները վերջը ձեզի  
14 վկայութիւն մը պիտի ըլլան: Ուստի ձեր սրախն մէջ  
դրէք՝ որ տուաջուրնէ շտանձէք պատասխան տալու  
15 վրայով: Վասն զի ես ձեզի բերան ու իմաստութիւն  
պիտի տամ, որու պիտի չկրնան դէմ խօսիլ կամ  
16 դէմ կենալ ձեր ամէն հակառակորդները: Եւ պիտի  
մատնութք ծնողքներէ ու եղացիներէ և ազգական-  
ներէ ու բարեկամներէ: ու ձեզմէ պիտի սպաննեն.  
17 Եւ իմ՝ անուանս համար ամենուն տաելի պիտի  
18 ըլլաք, Բայց մազ մը ձեր զիկէն պիտի չկրսուի:  
19 Զեր համբերութիւնովը հոդինիդ պիտի սպանաք:

20 Ու երբ տեսնէք Երուսաղէմիլ չորս կողմէն զօրքե-  
րով պատած, այն ատեն գիտցէք որ անոր աւերտումը  
21 մօտ է: Այն ատեն Հրեաստանի մէջ եղաղները լեռ-  
ները թող փախչին, ու անոր մէջ եղաղները թող  
հեռանան, և անոնք որ ագարակներն են թող չմըս-  
22 նեն անոր մէջ: Վասն զի այն օրեւէ վէժեինդրու-  
թեան օրեր են, որպէս զի բալոր գրուածները կատար-  
23 ուին: Բայց վայ այն օրերը յիշի եղաղներուն ու ծիծ  
առողջներուն, վասն զի մեծ նեղութիւն պիտի ըլլան  
երկրին վրայ, ու բարկութիւն ուրիշ էաց այս ժողո-  
24 վորդին վրայ: Եւ առօր բերնով պիտի կյանան, ու  
բոլոր ազգերուն մէջ գերի պիտի տարսուին, ու Երու-  
սաղէմ ազգերուն սակաց կոխան պիտի ըլլան, մինչեւ  
25 ազգերուն ժամանակները լմնան: Ու արեգակին և  
լուսնին ու աստղերուն վրայ նշաններ պիտի ըլլան,  
ու երկրի վրայ ազգերը ապշտութեամբ պիտի տագ-  
26 նապին, և ծովը ու աղիկները պիտի գուան: Մար-  
դոց սիրտերը պիտի նուազին եւենց վախէն և աշխարհի  
վրայ գալուր բաներուն սպասելէն, վասն զի երկինքի  
27 զօրութիւնները պիտի շարժին: Եւ այն ատեն պիտի  
տեսնեն Որդին մարդոց ամզի մէջ եկած զօրութիւ-  
28 նով ու մեծ փառքով: Ու երբ այս բաները սկիզբն ըլ-  
լալ ելէք ու գլուխնիդ բարձրացուցէք, վասն զի  
ձեր գրկութիւնը մօտ է:  
29 Եւ առակ մը ըստ անոնց, Տեսէք թղենին ու ա-  
30 մէն Ժառերը. Երբ կը բարպարչին, տեսնելով գոնք  
31 ձեզմէ կիմանաք թէ ալ ամսուը մօտ է: Խղջապէս  
դուք երբ այս բաները եղած տեսնէք, գիտցէք որ  
32 Աստուծոյ թագաւորութիւնը մօտ է: Ճշմարիտ կ'ը-  
սեմ ձեզի, որ այս ազգը պիտի չանցնի, մինչեւ այս

- 33 ամէն բաները ըլլան՝ Երկինք ու Երկիր պիտի անցնին,  
 34 բայց իմ խօսքերս բնաւ պիտի չանցնին։ Խոկ գուք  
 զդուշացէք ձեր անձեռուն։ ըլլաս որ սիրտերնիդ կե-  
 րուխումնվ ու գինովութիւնով և աշխարհային  
 վրաղմունքներով ծանրանոյ, ու յանկարծակի այն  
 35 օրը ձեր վրայ համին, Վասն զի բոլոր երկրին երեսը  
 բնակողներուն ամէնուն վրայ սրոգայթի մը պէս պի-  
 36 տի համին Ռւսափ արթան կեցէք, ու ամէն առեն  
 աղօթք ըրէք, որ արժանի ըլլաք այն բոլոր ըլլառու-  
 բնաներէն աղատուելու և Որդւոյ մարդոյ առջն կոյ-  
 նելու։  
 37 Ու ցորեկները տաճարին մէջ կը սովորէցնէք. և գի-  
 շերները կ'լլէք Զեթենեաց բառած լեռը կը կենար,  
 38 Եւ բոլոր ժողովուրդը առառունց կանուխ իրեն կ'եր-  
 թային առաջար՝ իր իօն+էր լսելու։

## ԳԼ. ԻԲ

- 1 **Բ**աղարջակերաց աօնը մօտեցաւ որ Զատիկ կ'ըսուէք.  
 2 Եւ քահանոյապետները ու դպիրները կը քնառուէն  
 թէ ի՞նչպէս սպաննեն զանիկա, քանզի ժողովուրդէն  
 կը վախային։  
 3 Եւ Սասանայ՝ Խոկարխովացի մականուանեալ  
 Յուղայի ներոր մոտաւ, որ ասասերկուքին համրան-  
 4 քէն էք։ Եւ զնաց քահանոյապետներուն ու իշխան-  
 ներուն հետ խօսք ըրաւ թէ ի՞նչպէս զանիկա մտանէ  
 5 անոնց։ Անոնք ալ ու բախսացն և խստացն անոր  
 6 սասկ առալ Ու ի՞նք վրան առաւ, և պատեհութիւն  
 մը կը քնառուէք սրպէս զի զանիկա մասնէ անոնց ա-  
 ռանց բազմութեանը ժողովուելուն։

- 7 Եւ բաղարջակերաց օրը եկաւ, որուն մէջ պէտք  
 8 էք զատիկը մորթէւ Ու զրկեց Պետրոսը և Ցովչան-  
 նէսը ու ըստ, Գացէք պատրաստեցէք մեզի զատիկը  
 9 սրպէս զի ուտենք։ Անոնք ալ ըսին անոր, Ո՞ւր կ'ու-  
 10 զես որ պատրաստենք։ Եւ ըստ անոնց, Ահա Երբ  
 քաղաքը մտնէք, ձեզի մորդ մը պիտի պատահի որ  
 սունի Քոյ ջուրը սափոր մը կը տանի. անոր ետևէն  
 11 զացէք այն տաւնը ուր ինք կը մտնէ. Եւ այն տանը  
 տէրոջ ըսէք, Վարդապետը կ'ըսէ քեզի, Ո՞ւր է օ-  
 թեանը ուր աշակերտաներուա հետ մէկտեղ զատիկը  
 12 ուտեմ Ան ալ ձեզի յարգարսուած մէծ ֆերնատուն  
 13 մը պիտի ցուցնէ, հոն պատրաստեցէք։ Եւ գացին  
 գտան ի՞նչպէս իրենց ըստ, ու զատիկը պատրաստեցին։  
 14 Ու երբ ժամը հասաւ, սեղան նստաւ և տասուեր-  
 15 կու առապետալները իրեն հետ Ու ըստ անոնց, Փա-  
 փաքելով փափաքեցայ որ այս զատիկը ձեզի հետ  
 16 ուտեմ իմ չարչարուելչս առաջ Քանզի կ'ըսեմ  
 ձեզի որ ալ բնաւ տակէ պիտի չուտեմ՝ մինչեւ Աս-  
 17 տուծոյ թագաւորութեանը մէջ կասարուի։ Եւ գտ-  
 ւաթը առաւ, գոհացաւ ու ըստ, Առէք տակիս ու  
 18 բաժնեցէք ձեր մէջ Վասն զի ձեզի կ'ըսեմ որ ընաւ  
 որթին բերքէն պիտի չսմեմ։ Մինչեւ Աստաւծոյ թա-  
 գաւորութիւնը գոյ։  
 19 Եւ հաց առաւ, գոհացաւ, կարեց և տուաւ ա-  
 նոնց ու ըստ, Այս է իր մորմին, որ ձեզի համոր  
 20 արուած է. ասիկա ըրէք զիս յիշէլու համոր։ Նոյն-  
 պէս ալ գտաւթը առաջ լնիթ ըրէքէն ետեւ ու ըստ,  
 Այս գտաւթը նոր ուխտ է իմ արիւնովս որ ձեզի  
 համոր կը թափուի։  
 21 Բայց ահա զիս մատնողին ձեռքը ինծի հետ այս

- 22 սեղանն էւ Եւ յիրաւի Որդին մարդոց կ'երթաց՝ ինչ-  
պէս սահմանուած է, բայց վոյ ոյն մարդուն՝ որուն  
23 ձեռքալ անիկա կը մաստուի, Եւ անոնք սկսոն ի-  
րենց մէջ հարցուփորձ ընել՝ թէ իրենցմէ ո'վ է որ  
ոյն բանը պիսի ընէ:  
24 Վէճ մըն ալ եղաւ անոնց մէջ թէ իրենցմէ ո'վ  
25 մեծ պիսի սեպուի: Եւ անիկա ըստաւ անոնց, Աղգաց  
թագաւորները անոնց կը տիրեն, և անոնք որ կ'իշ-  
26 խեն անտոնց բարերար կը կաչուին: Բայց դուք այն-  
պէս պիսի չըլլաք, հապս ան որ ձեր մէջ մեծ է,  
պզափիկն պէս թող ըլլայ, և առաջնորդը սպասաւո-  
27 ըն պէս: Քանզի ո՞վէ մեծը, սեղան նստա՞ղ թէ սպա-  
սաւորը, չէ՞ որ սեղան նստողը, ստկցն ես ձեր մէջ  
28 սպասաւորի մը պէս եմ Եւ դուք անոնք էք, որ միշտ  
ինձի հետ կը կենացիք իմ փորձութիւններուն մէջ.  
29 Ես ալ ձեզի թագաւորութիւն ու սեփակ կ'ընեմ, ինչպէս  
30 իմ Հայրա ինձի թագաւորութիւն մը ուժաւ ըրաւ. Որ-  
պէս զի դուք իմ սեղանէս ուտեք ու խմէք իմ թա-  
գաւորութեանն մէջ, և աթուններու վրայ նստիք Խա-  
րայէի տասուերկու ցեղերը դատելու:
- 31 Եւ Տէրը ըստաւ, Սիմոն, Սիմոն, աշա Ստատոնաց  
32 ձեզ գնաւաեց, որ ցորենի պէս խարբալէ. Բայց ես  
քեզի համար աղօթք ըրի որպէս զի քու հաւասաք-  
չպակսի. և գուն երդ դորձի դաս, քու եղայլներդ  
33 ու հաստատէ: Խակ ինք ըստաւ անոր, Տէր, ես պատ-  
րաստ եմ քեզի հետ ըստաւ երթալու ալ, մեռնելու  
34 ալ: Եւ անիկա ըստաւ, Պետրոս, քեզի կ'ըսեմ որ սյու-  
օր հաւը պիսի չխօսի մինչև գուն երեք անդամ՝ ու-  
րանաս՝ շուշու թէ զիս չես ճռնչնար:  
35 Եւ ըստաւ անոնց, Երբ ձեզ զրկեցի առանց քսակի

- ու պարկի և կոչիկներու, բանի մը կարօտ եղածք:  
36 Անանք ալ ըսին, Բանի մըն ալ չէ, ետքը ըստաւ, Բայց  
չիմու ան որ քսակ ունի, թող եւն հետ սպանէ, նոյն-  
պէս ալ պարկի. և ան որ Բու- չունի, թող իր հան-  
37 գերձը ծափէ ու իրեն թուր մը ծափու առնէ: Քանզի  
կ'ըսեմ ձեզի որ այս գրաւած բանն ալ պէտք է որ  
իմ վրաս կատարուի, Եւ անօրէններու հետ սեպուե-  
ցաւ. քանզի ինչ որ ինձի համար որշաւած է, կա-  
38 սարուելու վրայ է: Անսնիք ալ ըսին, Տէր աշա հսու  
երկու թուր կոյց. ան ալ ըստաւ անոնց, Զերքի են  
39 Ու ելու իր սովորութեանը պէս Զիթենեաց լեռը  
40 գնաց. աշակերտներն ալ իր ետեւէն գտցին, Երբ ոյն  
տեղը հասաւ, ըստաւ անոնց, Աղօթք ըրէկ սրպէս զի  
41 փորձութեան մէջ չմտնէք: Եւ ինք անոնցմէ զատ-  
42 աղօթք կ'ընէր, Ու կ'ըսէր, Հոյը, եթէ կ'ուզես, այս  
գաւամիթը ինձմէ անցուը, բայց ոչ թէ իմկանքին հապս  
43 քուկի թող ըլլայ: Ու երկինքէն հրեշտակ մը երեցաւ  
անոր և կը զօրացնէր զանիկա, ու սասպէկ նեղութեան  
մէջ ըլլալով՝ աւելի զերմեռանդութեամբ աղօթք  
44 կ'ընէր: Եւ իր քրտինքը արփենի մեծ կաթիկներու  
պէս էր, որ գետինը կը թափուէր:  
45 Եւ աղօթքէն ելլելով աշակերտներուն քոյլ եկաւ,  
46 ու գտաւ զաննիք արտանիթենէն քնացած. Եւ ըստաւ  
անոնց, ինչու կը քնանագք. ելլէք աղօթք ըրէկ ո՞յ  
պէս զի փորձութեան մէջ չմտնէք:  
47 Ու երբ գետ, կը խօսէր, աշա բալլութիւն մը, և  
Յուգու ըստաւծն ալ ասասւերկուքէն մէկը, անոնց  
առջեւէն կ'երթար, ու Յիսուսի մօսեցաւ որպէս զի  
48 զանիկա համբուրէ: Բայց Յիսուս ըստաւ անոր, Յու-

- 49 գա, համբուրելով կը մատնես Որդին մարդոյ: Եթք  
անոր ըօլքախքը եղողները անսան ինչ որ պիտի ըլ-  
50 ըստ, ըսին անոր, Տէր, թուրալ զարնե՞նք: Եւ անսնցմէ  
մէկը քահանայապետին ծտուցին զարկաւ ու մէկդի  
51 հանեց անոր աջ ականջը. Պատասխան տուռու Յի-  
սուս ու ըստ, Թողլ տուեք մինչև այդ տեղը. և  
52 դպու անոր ականջն ու բժշկեց զանիկա: Եւ Յի-  
սուս իր վրայ եկող քահանայապետներուն ու տու-  
ժարին իշխաններուն ու ծերերուն ըստ, Իրը թէ  
53 աւազակի՞ վրայ ելաք առերերավ ու բիրերով: Ամէն  
օր ձեզի հետ էի տաճարին մէջ և ինձի ձեռք զըստ-  
կեք սացց սպո է ձեր ժամանակը ու խաւարին իշ-  
խանութիւնը:
- 54 Ու զանիկան բանելով տարին ու քահանայապետին  
տունը մոցուցին, Պետրոս ալ հեռուանց անոր ետեէն  
55 կ'երթար: Եթք կրակ վառեցին գաւիթին մէջ ու  
56 մէկտեղ նստան, Պետրոս ալ նստաւ անոնց մէջ: Աղա-  
խին մը տեսնելով զանիկան որ կրակին քով նստեր  
էր, նայեցաւ անոր ու ըստ, Ասիկան ալ անոր հետ  
57 էր, Բայց Պետրոս աւրացաւ զանիկան ու ըստ, Ով  
58 կին, ես զանիկան չեմ ճանչնար: Եւ քիչ մը եսքը  
ուրիշ մը տեսաւ զանիկան ու ըստ, Պուն ալ անոնց-  
մէ ես, և Պետրոս ըստ, Ով մարդ, ես անացի չեմ:
- 59 Եւ ժաման մը չափ անցնելէն ետե՝ ուրիշ մըն ալ կը  
պնդէր ու կ'ըսէր, Յիբարի տափկան ալ անոր հետ էր,  
60 վասն զի Պալմերացի է: Բայց Պետրոս ըստ, Ով  
մարդ, չեմ գիտեր ի՞նչ կը զրուցես դուն. և քանի  
61 որ իր խօսքը բերանն էր, խալցն հաւը խօսեցաւ: Եւ  
Տէրը դարձաւ ու Պետրոսի նայեցաւ. Պետրոս ալ  
մաքքը բերաւ Տէրոջը խօսքը որ իրեն ըսէր էր թէ

- Գեռ հաւը ջասած՝ երեք անգամ պիտի ուրանաս  
62 զիս: Ու Պետրոս դուրս ելլելով գաւանապէս լացաւ:  
63 Եւ ոյն մարդիկը որոնկ Յիասուը կը պահէին, ծաղր  
64 կ'ընէին զանիկան ու կը ծեծէին. Եւ անոր աշխեռ  
ծածկելով անոր երեսին կը զարնէին, ու կը հարցնէին  
իրեն ըսէլով Մարգարէտացի, Ո՞վ է ան որ քեզի  
65 զարկաւ: Եւ ուրիշ շատ բաներ կը զրուցէին իրեն  
հայհայելով:
- 66 Ու եթք առառու եղաւ, Ժողովաւրդին ծերակոյար,  
քահանայապետաները և դպիրները ժողովաւեցոն, ու  
տարին զանիկան իրենց տառեանը և ըսին, Եթէ Քրիս-  
67 տորը գուն ես, ըսէ մեզի: Ըստ անոնց: Եթէ ձեզի  
68 ըսէր ալ՝ պիտի չչաւտառաք. Եւ եթէ ձեզի բնա է  
հարցնեմ: Ինձի պատասխան պիտի չտաք, ու ալ Պ-  
69 պիտի արձակէք: Ասէլ ետե Որդին մարդոյ Աստու-  
70 ծայ զըստութեանը ուջ կողմէն պիտի նստի: Եւ ամէնը  
ըսին, Ուրիմն գուն Աստուծոյ Որդին ես. Ինք ալ  
71 ըստ անոնց, Դայք կ'ըսէք թէ ես եմ: Եւ անոնք  
ըսին, Աւ ի՞նչ պէտք է մեզի վկայութիւն, վասն զի  
մենք մեզմէ ատոր բերնէն լսեցինք:
- ԳԼ. ԻԳ.
- 1 Եւ անոնց բոլոր բազմութիւնը սաք ելլելով՝ տարին  
2 զանիկան Պիլատոսի. Ու սկսն անոր վրացով ամ-  
բաստանութիւն ընէլ և ըսէլ Ասիկան գտանք, որ  
եր ապրը կը մոլորեցնէր, ու Կայսրին հարկ տալէ  
կ'արգիլէր, և իրեն համար կ'ըսէր թէ ինք Քրիստոս ու  
3 թագաւոր է: Խալ Պիլատոսի հարցուց անոր ու ըստ,  
Հրեց թագաւորը դա՞ւն ես անիկան ալ պատասխան

- 4 առաւաւանոր ու ըստաւ, Դուն կ'ըսեսալլյն ատեն Պիղասասոս քահանայապետներուն ու ժողովուրդներուն ըստաւ, Ես այս մարդուն վրայ յանցանք մը չեմ գտներ, 5 Բայց անոնք ոտք կը կոփէին ու կ'ըսէին թէ ժողովուրդներար կ'անցնէ, ու ըսլը Հրէաստանի մէջ կը արդվեցնէ, 6 ցընէ՝ Գալիւսոյէ սկսած մինչև ոյս տեղ: Եւ Պիղասասոս երբ լսեց Գալիւսոյի համոր, հարցուց թէ այդ 7 մարդը Գալիւսոյի՞ է: Ու երբ իմացաւ թէ Հերովդէսի իշխանութեան տակէն էր, զանիկա Հերովդէսի զրկեց, քանիփ ան ալ այն օրերը երուաղէմ էր:
- 8 Եւ Հերովդէս երբ Յիսուսը տեսաւ, շատ ուրախացաւ, վան զի ինք շատոնցուընէ կը փափափէր զոնիկա տեսնել քանիփ անոր վրայով շատ բաներ լսած էր, և կը յուսար որ անկէ եղած նշան մը տեսնէ:
- 9 Ու շատ խօսերով հարցուափոք կ'ընէր անոր, բայց
- 10 անիկա բնոււ իրեն պատասխան մը չտուաւ: Քահանայապետները ու դափիներն ալ կեցեր էին, և սոսա տիկ ամբատանութիւն կ'ընէին անոր վրայ: Իսկ Հերովդէս անարդեց զանիկա իր զօրականներուն հետ, ու ծաղր ընելէն ետեւ փաւաւոր հանդերձներ հագ-
- 12 ցուց անոր, և նորէն Պիղասասի դրկեց: Ու այն օրը Պիղասաս և Հերովդէս իրարու հետ բարեկամ եղան. որովհետեւ առաջ իրենց մէջտեղ թշնամութիւն կար:
- 13 Եւ Պիղասաս քահանայապետները ու իշխանները
- 14 և ժողովուրդը մէկան կանչեց: Եւ ըստաւ անոնց, Այս մարդը առջեւս ըերիք ժողովուրդը մօլորեցնողի պէս, և աչա ես ձեր առջեւ քննութիւն ընելսմ ատոր համար ձեր լրած ամբատանութիւններն յանցանք
- 15 մը չգտայ այդ մարդուն վրայ. Ու ալ Հերովդէս, վասն զի ձեղ անոր զրկեցի, և աչա ատիկա մահա-

- 16 արժանի գործ մը ըրած չէ: Ուրեմն պատիճ մը տամ' 17 ասոր ու արձակեմ: (Իսկ առնին ասենք պէտք էր որ մէ- 18 կը արձակէր անոնց.) Եւ բար բազմութիւնը մէկանեղ աղաղակեցին՝ ըսելով, Վեցուր ատիկա, ու Բարար- 19 բան արձակէ մեզի: (Որ քաղաքին մէջ եղած իրու վութեան մը և մարդասպանութեան համար բանար 20 գրուած էր: ) Եւ Պիղասաս Յիսուսը արձակել ուղե- 21 լով նորէն խօսեցաւ անաց: Բայց անոնք կ'աղաղա- կէին ու կ'ըսէին, Խաչը հանէ ատիկա, Խաչը հանէ: 22 Եւ ինք երրորդ անդամ ըստաւ անոնց, Բայց լունչ չար գործ լրած է տափկա: Ես ատոր վրայ մօնչու արժանի յանցանք մը չտայ: ուրեմն պատիճ մը տամ' ատոր 23 ու արձակեմ: Իսկ անոնք մէծածոյն աղաղակներով ոտք կը կոփէին, ու կ'ուղելին որ անիկա խաչուի. և անոնց ու քահանայապետներուն ձայները զօրաւոր 24 եղան: Ու Պիղասաս վճաեց որ անոնց ինդիբը ի 25 գործ դրսուի: Եւ անոնց ուղած յարչը որ խռովութեան և մարդասպանութեան համար բանար գըր- ուած էր, արձակեց անոնց, և Յիսուսը իրենց կամբին յանձնեց:
- 26 Ու երբ զանիկա կը տանէին, Ակման կիւրենացի շառած մէկը ըռնեցին՝ որ արտէն կու գար, և խաչը 27 անոր վրայ դրին որպէս զի Յիսուսի ետեւէն բերէ: Հ անոր ետեւէն կ'երթաց անձ բազմութիւն ժաղովարդ- ներու, նաև կիներու, որոնք կ'ողբային ու կու ընյին 28 անոր համար: Եւ Յիսուս գարձաւ անոնց ու ըստաւ, Ով իրուաղէմի աղջիկներ, իմ վրա մը լսք, հապա ձեր անձերուն վրայ ու ձեր զաւակներուն վրայ լացէք:
- 29 Վասն զի աչա օրեր կու գան, որոնց մէջ պիտի ըսեն, իրանի՛ ամուներուն, և այն սրավայններուն որոնք

- 30 չծնան, և ծիծերուն սրանք կաթ չտուին: Ազյն տաեն պիտի սկսին ըսել լեռներուն, Մեր վրայ ինկեք, ու  
31 բլուրներուն՝ Մեղծածկեցք: Վասն զի եթէ դաշտը փայտին այսպէս կ'ընեն, հապա չորին ի՞նչ պիտի ըլլօյ:
- 32 Ուրիշ երկուք ալ, չարագործներ, բերուեցան ա-  
33 նոր հետ սպաննուելու: Երբ Գագամթ ըսուած տեղով գացին, համ խաչը հանեցին զանիկա, և այն չարա- գործներն ալ, մէկը աջ կողմէն ու միւսը ձախ կող-  
34 մէն, խաչեցն: Եւ ըսաւ Յիսուս, Հայր, թողւթիւն ասուք ասոնց, վասն զի չեն գիտեր ի՞նչ կ'ընեն: Ու անոր հանդերձները բաժնելու ասեննին վիճակ ձգե-  
35 ցին: Եւ ժողովուրդը կայսեր կը նայէք: Իշխաններն ալ անոնց հետ կը նախատէին զանիկա ու կ'ըսէին,  
Ուրիշները ազատեց, թող ինքվինքն աւ ազատէ, եթէ  
36 ասիկա է Քրիստոս, Աստուծոյ ընտրեալը: Ծագր կ'ը- նէին զանիկա զինուորներն ալ, առջեւը կու գայլն  
37 քայտիք կը մասուցանէին անոր, Ու կ ըսէին, Եթէ  
38 դուն ես Հրեից թագաւորը, քու անձգ ազատէ: Եւ գիր մը գրուած էր անոր վրայ Յունարէն ու Լատի- ներէն և Երասյեցերէն գիրերով, թէ Ասիկա է Հրեից թագաւորը:
- 39 Եւ ոյն կախուած չարագործներէն մէկը հայհպու- թիւն կ'ընէր անոր ու կ'ըսէր, Եթէ դուն Քրիստոս  
40 ես, ազատէ քու անձգ ու մէզ ալ: Խակ միւսը պա- տասխան տուաւ և զանիկա յանդիմաննելով՝ ըսաւ,  
Դուն Աստուծմէ չես վախնար, սրովչետև նոյն դա-  
41 տապարատութեան մէջ ես: Ու մենք իրաւունքով,  
քանզի ահա մեր ըրածներուն արժանաւոր հատու- ցումը կ'առնենք. բայց ասիկա գէշ բան մը չըրաւ:

- 42 Եւ ըսաւ Յիսուսի, Տէր, յիշէ զիս, երբ քու թագա-  
43 ւորութիւնավդ գաս: Յիսուս աւ ըսաւ անոր, ձշմա- րիս կ'ըսէմք քեզի, Դուն այսօր ինձի հետ գրափառին մէջ պիտի ըլլաս:
- 44 Եւ ժամը վեցին ատեններն էր, ու բլուր երկրին վրայ խաւար եղաւ մինչև իններորդ ժամը և արեւը  
45 խաւարեցաւ, Ու տաճարին վարագոյըը մէջ տեղէն  
46 պատեցաւ. Եւ Յիսուս մէծ ձայնով աղաղակեց ու- րսաւ, Հայր, քու ձեռքդ կ'աւանդեմ իմ հոգիս. ու երբ զայս ըստաւ, հոգի տուաւ:
- 47 Եւ հարիւրապեմը եղած բանը տեսնելով՝ Աստու- ծոյ փառք տուաւ ու ըսաւ, Իրացընէ այս մարդը  
48 արդար էր: Եւ այս տեսաբանը դիտելու համար ժողվուած բլուր բազմութիւնները եղած բաները տեսնելով՝ կուրծքերնուն կը զարնէին ու ետ կը դառ-  
49 նային: Ամէն իր ճանչուորներն ալ հեռաւն կայներ էին, նայնպէս ալ այն կիները՝ որոնք իր ետեւէն եկեր էին Գալիլեայէ, ու կը տեսնէին այս բաները:
- 50 Եւ աշա մարդ մը Յալւէփ անունավ, որ խորհրդա-  
51 կան էր, բարի ու արդար մարդ մը, (Ասիկա անոնց խորհրդին ու գործին հուանութիւն տուած չէր,) Հրեաներուն Արքմաթիս քաղաքէն, որ ինք ալ Աս-  
52 տուծոյ թագաւորութեանը կը սպասէր: Ասիկա Պի-  
53 զատոսի գնաց, ու Յիսուսի մարմինը խնդրեց: Եւ զանիկա խաչեն իշեցնելով՝ կտաւով փառթեց, ու քարէ փորուած գերեզմանի մը մէջ գրաւ, ուր բնաւ  
54 մէկը գրուած չէր: Եւ այն օրը ուրբաթ էր, ու շա- բաթը պիտի \*սկսէր:

\*Յուն. լուսնար

- 55 Եւ անոր ետեւէի գացին այն կիները, որոնք իրեն  
հետ Գալիլեայէ եզած էին, որ անսան գերեզմանը,  
56 և թէ ի՞նչպէս անոր մարմինը համ դրսեցաւ: Եւ  
գառնալով խանկիր ու իւղեր պատրաստեցին, և  
շաբաթ օրը հանգստացան պատուիրանքին համեմատ:

## ԳԼ. ԻԴ

- 1 Ու մէկշաբթի օրը առտուանց շատ կանուխ գերեզ-  
մանը եկան, ու բերին այն խունկիրը զրանք պատ-  
2 բաստեր էին, և ուրիշ կիներ ալ անոնց հետ: Ու  
3 քարը գերեզմանէն մէկի գլորուած գտան: Եւ ներս  
4 մտնելով Տէր Յիսուսի մարմինը համ չգտան: Ու  
եղաւ որ երբ անոնք այս բանին համար տարտկու-  
անքի մէջ էին, աչա երկու մարդիկ լուսափայլ հան-  
5 գերձներով հասան անոնց: Ու երբ վսիսով լեցուած՝  
երեսնին դէպի ի գետինը ծուցին, այս հոդիէն ըսին  
անոնց, Խնչո՞ւ համար ողջը մեռելներուն հետ կը  
6 վինտուեք. Հոս չէ ան, հապա յարութիւն առաւ, միտ-  
քերնիդ բերեք ի՞նչպէս խօսեցաւ ձեզի երբ գետ Գալիլ-  
7 եսոյի մէջ էր, Ըսելով թէ Որդին մարդոց պէտք էր որ  
մեղաւոր մարդոց ձեռքը մասնուի ու խաչը ելլէ, ու  
8 երրորդ օրը յարութիւն առնէ: Եւ մաքերնին բե-  
9 րին անոր խօսերը: Ու գերեզմանէն դառնալով այս  
ամէն բաները պատմեցին տասնմետիկին ու ըսլոր ու-  
10 րիշներուն: Եւ էին Մարիսոմ Մագդալենացի ու  
Յօվհաննա և Յակովոսի Ֆոյք Մարիսոմ, ու անոնց  
հետ ուրիշներ ալ, որոնք այս բաները առաքեալնե-  
11 րուն պատմեցին. Եւ անոնց առջև ցնորական խօս-  
քեր երեւցաւ անոնց զրուցածը, ու չէին հաւատար

- 12 անոնց: Բայց Պետրոս ելուս վազեց դէպի ի գերեզմա-  
նը, ու ծուելով նոցեցաւ և անսաւ որ միայն կտաւ-  
ները կը կենացին. ու գնաց՝ իր մաքին մէջ զարմա-  
նալով այն եղածին վրայ:
- 13 Եւ աչա անոնցմէ երկուքը նոյն օրը գեղ մը կ'եր-  
թացին, որ Երուսաղէմէ վաթուն ասպարէց հետու
- 14 էր, և անոր անունը Եմմաւուս էր: Եւ անոնք կը խօ-  
սէին իրարու հետ սյուր եղած անցքերուն վրա-
- 15 յով: Ու եղաւ որ երբ անոնք կը խօսակցէին ու խոր-  
հըրդաժութէին կ'ընէին, Յիսուս ինք ալ մօտնալով
- 16 անոնց հետ կ'երթար: Բայց անոնց աչքերը բոնուած
- 17 էին, որպէս զի վիճիք շնանչան: Եւ ըսաւ անոնց,  
Խնչ են այդ խօսերը՝ որ քաղելով իրարու հետ կը
- 18 խօսակցիք, ու տրտումն ալ էք: Պատասխան տուաւ-  
անայդ մէկը, որուն անունը Կղէտվաս էր, ու ըսաւ  
անոր, Դուռն միայն Երուսաղէմի մէջ կը կենաս, ու
- 19 չես դիտեր թէ ինչո՞ւ երան հնմ այս օրերու Եւ ինք  
ըսաւ անոնց, Խնչ անոնք ալ ըսին իրեն, Նազովիե-  
ցի Յիսուսի համար, որ Աստուծոյ և բոլոր ժողովուր-  
դին առջև գործով ու խօսքով զօրաւոր մարդարէ մը
- 20 եղաւ. Խնչպէս քահանայպետները ու մեր իշխաննե-  
րը մահուան գատասատանի մասնեցին զանիկս և
- 21 խոչը հանեցին: Խակ մենք կը յուսոյինք թէ անիկա  
էր որ Խօսայէլք պիտի աղասաէր. և այս ամենուն վրայ
- 22 այս երրորդ օրն է որ այս բաները եղան: համե մեր  
մէջն մէկ քանի կիներ ալ մէջ զարմացացին, որոնք
- 23 առաւուած կանուխ գերեզմանը գացին, Ու անոր  
մարմինը չգանելով եկան ու ըսին թէ հուշուակնե-  
րու աեսիլք ալ աեսան, որոնք ըսէր են թէ անիկա
- 24 ողջ է: Եւ մերիններէն մէկ քանիներն ալ գերեզմա-

Նը գացին ու պյանգես գտան, ինչպէս այն կիները  
 25 զբուցեցին, միայն թէ զինք չտեսան: Ան ալ ըստ  
 անոնց, Ուշանմասներ ու թուլամափառներ, չաւատառ  
 լու այն բոլոր բաներուն, զբունք մարդարէները խօ-  
 26 սեցան. Զէ՞ որ Քրիստոսի պէտք էր սյո չարչարանք-  
 27 ները կրել, և իր փառքը մտնել: Ու սկսելով Մոլ-  
 ուսէւ և բոլոր մարդարէներէն, կը մեկնէր անոնց, ինչ  
 28 որ իրեն համար բոլոր գիլքերուն մէջ գուշաց էր: Երբ  
 մծաեցան այն գեղին՝ ուր կ'երթային, ինք ալ կը  
 ցաւցնէր որպէս թէ տեղի հեռու տեղ մը պիտի եր-  
 29 թար: Բայց ասիսկեցին զինք ու ըսին, Մեր քով կե-  
 ցիր, վասն զի իրիկունը մատէ և որը իշած է, և մտաւ  
 30 անոնց հետ կենալու: Ու երբու որ երբ ինք անոնց  
 հետ սեղան նստաւ, հաց առաւ, օրչնեց, ու կարե-  
 31 լով տուաւ անոնց: Այն տաեն անոնց աչքերը բաց-  
 ուեցան ու զինք ճանչցան, և ինք անոնցմէ աներե-  
 32 ւոյթ եղաւ: Ու իրարու կ'ըսէին, Զէ՞ որ սիրաերինի  
 մեր ներսիդին կը բարպարէր, երբ ինք մեղի հետ կը  
 խօսէր ճամբաւն մէջ, և գիլքերը կը մեկնէր մեղի:  
 33 Ու եղան նյոն ժամանւն երտաւաղէմ գարձան, ու  
 մէկտեղ ժողվուած գտան տասնմէկը ու անոնց հետ  
 34 եղողները: Որոնք կ'ըսէին թէ իրաւցընէ Տէրը յա-  
 35 րութիւն առաւ, ու Արմենի երեւցաւ: Եւ իրենք  
 պատմեցին ինչ որ ճամբաւն վայր եղաւ, և թէ ի՞նչ-  
 պէս ինքովնիք իրենց ճանչցաց հացը կարած տաենլ.  
 36 Եւ քանի որ սյո բաները կը խօսէին, Յիսուս ինք  
 կայնեցաւ անոնց մէջ տեղը ու ըստ անոնց, Խաղա-  
 37 ղութիւն ձեղի: Բայց անոնք զարհուրելով կը վախ-  
 38 նային, ու կը կարծէին թէ սպի մը կը տեսնեն: Եւ  
 ըստ անոնց, ինչ ստուլած էք, և ինչ սիրտեր-

39 նուդ մէջ խորհուրդներ կ'ելլեն: Տեսէք ձեռքերս  
 ու սոգերս, որ ես ինքնս եմ, շշափեցէք զիս ու տե-  
 սէք, վասն զի ոդին մարմին և սկզբներ չունենար,  
 40 ինչպէս զիս կը տեսնէք որ ունիմ: Եւ զայս ըսելով  
 41 ձեռքերը ու սոգերը ցուցաւց անոնց: Ու երբ տակտ-  
 ուին էրենց ուրախութենէն չէին հաւատար, և զար-  
 մանքի մէջ էին, ըստ անոնց, Ուտելիք մը ունիք  
 42 հոս: Անոնք ալ կտոր մը խորոված ծուկ ու մեղա-  
 43 խորխով տուին իրեն: Եւ առաւ կերաւ անոնց առ-  
 44 ջեւ: Եւ ըստ անոնց, Աստիք են այն խօսքերը զրոնք  
 ձեղի խօսեցայ երբ դեռ ձեզի հետ էի, թէ Պէտք է  
 որ կատարուին այն ամէնը՝ սրոնք Մովսէսի օրէնքին  
 մէջ ու մարդարէներուն մէջ և սաղմոններուն մէջ  
 45 ինձի համար գրուած են: Այն տաեն անոնց միաքը  
 46 բացաւ սրպէս զի գիլքերը հասկնան. Եւ ըստ անոնց  
 թէ Այսպէս գրուած է, և այսպէս պէտք էր Քրիս-  
 տոսի չարչարուիլ ու երրորդ օրը մեռելներէն յարու-  
 47 թիւն առնել. Եւ անոր անունովը ապաշխարութիւն  
 ու մեղքերու թողութիւն քարոզուիլ բոլոր ազգերու  
 48 մէջ Երաւասաղէմ սկսած: Ու դուք էք սյո բաներուն  
 49 վկանները: Եւ աչա ես իմ Հօրս խոստանւէք ձեր վրայ  
 կը զրկեմ: բայց գուք Երաւասաղէմ քաղաքիս մէջ  
 նստեցէք, մինչեւ վերէն զօրութիւն առնէք ձեր վրայ:  
 50 Եւ զանոնք մինչեւ Տեթանիս հանեց, ու իր ձեռ-  
 51 քերը վեր վերցնէլով օրհնեց զանոնք: Եւ եղաւ որ  
 երբ զանոնք կ'օրհնէր, զատուեցաւ աննցմէ ու վեր  
 52 կ'ելլէր երկինք: Անոնք ալ երկրարտութիւնն ընելով  
 53 անոր՝ մժ ուրախութեամին Երուասաղէմ գարձան. Եւ  
 ամէն տաեն ստարին մէջ էին, ու կը գտվառանին  
 և կ'օրհնէին զԱստուած: Ամէն

4P

Եղիշ



Խ 17 / 1 /

ՀՅԱՂԱՋԻՆ գրադարան



NL0162909

